

է տեղափոխուել ալժմ իւր կնոջ ու որդւոց հետ և թողնել
իւր թժկական գործը, երկարամեալ աշխատութեանց պառուղը,
բայց պրուսացիների խմբի մէջ ինքն ալնուամենալիւ չի
մտնի ծառալիւու:

Երեք ժամին մօտ հասանք Գրառուֆտալի պանդոկին և
բարձրացանք նեղ սանդուխքով:

Բժիշկը նայեց տանիքի սնացած կոճղերին, մանրիկ լու-
սամուտներին, փոքր վառարանին և ասաց.

Ալստեղ շատ նեղուածք է և մուալլ՝ աղատ օդում ապ-
րելու սովոր մարդկանց համար:

Նա լիշեց մեր սիրուն տունը հովտում, լուսաւոր պա-
տուհանները և սպիտակ պատերը. Ո՞հ, ինչպէս ամեն ինչ
փօխուել էր:

Մի փոքր հանգստանալուց լետով՝ նա ասաց.

— Գնանք տեսնենք հիւանդին:

Ամենքս մտանք կողքի սենեակը, Արդէն մթնում էր,
լապտեր վառեցինք և բժիշկը, թեքուելով մահճակալի վերապ,
նակեց խեղճ պառակին ու ասաց.

— Բարե, Աննա տատ, Գրառուֆտալ զալով անցար ձեր
մօտից ու մտակ ձեղ աեսնելու. Ֆրենգերիկ հալրիկն ասաց, որ
տկար էք և եկալ տեսնելու:

Տատը ուշքի եկաւ, ճանաչեց նորան ու պատասխանեց.

— Ա՛խ, Դուք էք, Սէմպէրէն... Ալո՞... ալո՞... հիւանդ
եմ, շատ հիւանդ... գոնէ Աստուած խղճար իմ տանջանքնե-
րիս ու մահ տար:

Նա ալնպէս դեղնած էր ու նիհար, որ նակելով վրան՝
մտածում էիր.— Ինչպէս է մեր խեղճ մարմնակազմը տակաւին
դիմանում ալսպիսի ողորմելի վիճակի մէջ:

Նորա երբեմն ալեգարդ մազերը, ալժմ դեղնել էին վու-
շի նման, ալտերը խորն էին ընկել և աչքերը փալրում խոր-
շումած ճակատի տակից մի տեսակ տարօրինակ փալրով:

— Ցուսահասաւել պէտք չէ, տատի... Զեր հիւանդութիւ-
նը երբէք ալնքան վտանգաւոր չէ... հազը կանցնի մինչև ձմե-
ռուակ վերջը. պէտք է տաք մնալ միակն և տխուր մտածմունք-
ները ճեռու մղել... շուտով լետ կը դառնաք անտառի տունը
և ձեր բոլոր դժբաղտութիւններին վերջ կլինի:

— Ալո, ալո, — պատասխանեց նա, մեղ նակելով — լուս ու-

նիմ, որ ամեն բան նախկին դրութեան մէջ կընկնի, միայն ես արդէն շատ եմ ծերացել:

—Այնքան էլ ծեր չէք, ինչպէս ասում էք: Ձեր հիւանդութիւնը մրսելուց է: Պէտք է քամու ազդեցութիւնից պահ պանել, օրիորդ Վարդ-Մարի: Ցանութիւն, տատի, շուտով առողջացէք:

Ալապէս սիրո տուեց բժիշկը Աննա տատին, որ կարձես փոքր ինչ հանդստացաւ.

Սենեկից դուրս եկանք. ես սկսալ հարց ու փորձ անել քժկին, և որովհետեւ Վարդ-Մարին նս ալղաեղ էր, նա հարց-քեց ինձ.

—Կարձող եմ օրիորդ Վարդ-Մարիի ներկալութեամբ խօսել:

—Կարող էք, պատասխանեցի ես.—խեղճ դուստրս պարտաւոր է հիւանդին խնամել և նա ամեն բան պէտք է իմանալ, ուղղակի ասացէք, եթէ հիւանդութիւնը ծանր է և եթէ մենք պիտի կորցնենք վերջին էակը, որ սիրում է մեզ և սիրում մեղանից:

—Դէհ, ասաց նա,—խեղճ կինը հիւանդ է ոչ այնքան ծերութիւնից, որքան վլտից, որ մաշել է նորան: Զգուշացէք որ չվտացնէք իրան, ծածկեցէք նորանից ծեր դժբաղդութիւնները... Ուրախ ցոլց տուէք ձեզ... Յուսադրեցէք նորան... Նթէ սկսի անհանդստանալ-հանդարտեցրէք... կողմնակի ոչ ոքի շթողնէք մօտը, որ վատ լուրեր չաղորդեն. ամենալաւ դեղը, որ լանձնարարում եմ ձեզ, ալս է:

Երբ նա ալս ասում էր, Վարդ-Մարին սաստիկ գունատուեց և դէմքը ծածկելով ձեռքերի մէջ՝ մի տեսակ չոր հաղակսեց. նա իւր խօսքն ընդհատեց, նալեց նորան ու հարցրեց.

—Վաղձւց է հազում էք, օրիորդ Վարդ-Մարի:

—Շատ ժամանակ չէ,—պատասխանեց նա կարմրելով:

Բժիշկը նորանեց նորանը ձեռքը, զարկը շօշափեց ու ասաց.

—Դուք էլ պէտք է զգուշանաք. ալս ընակարանը վնասակար է առողջութեան համար: Երեկոները ջերմ չէք ունենում:

—Ո՞չ! բժիշկ:

—Աւելի լաւ. բայց կրինում եմ. պէտք է զգուշանալ և աշխատել, որ զու ևս հեռացնես քեզանից տխուր մտածմունքները:

Նա զիխարկը ու ձեռնափալոը վերցրեց, և վալր իշնելով՝ սսաց ինձ.

— Վաղը քաղաք մտէք և Ուէրի դեղատնից գեղ վերցրէք ու առաւօտ երեկու տատին տուէք երեք-երեք կաթիւ ջրէ մէջ. ալդ կաթիլներից շնչարգելութիւնը կանցնի՝ աշխատեցէք նորնպէս զգուշանալ ձեր դստեր. նա շատ է փոխուել վեց ամիս առաջ շատ առողջ էր ու թարմ. Պահպանեցէք:

— Աստո մծ իմ, — հեծեցի ես լուսահատուած. — դստերս պահպանմէմ. Պահպանեմ նորան... Ես ուրախութեամբ սեպհական կեանքս կտալի, միալն թէ ինձ համտը ալս թանկագին էակների կեանքն աղատէի ամեն դժբաղտութիւնից, վշտից ու տան ջանքներից:

Ես պատրաստ էի հեկեկալ երեխալի պէս. Պարոն Սէմ-պէրլէնն ալս նկատեց և դռանը, ձեռքս սեղմելով՝ զգացուած տասց.

— Ես ու դու ևս հիւանդ ենք, ալդպէս չե, Ֆրեդէրիկ հալրիկ. Մինչեւ անգամ լուրջ հիւանդ ենք. Մեր սրտերը տրաք-ւում եւ վշտից, տխուր մտս ծմունքները սպանում են մեզ. բայց մենք տղամարդ ենք, մենք պէտք է սրտու լինինք ամենքի փոխարէն:

Ցանկացալ գոնէ հովալ. մինչև պտուաը ուղեկցել, վասն զի մթնում էր. բայց նա մերժեց:

— Ճանապարհն ծանօթ է ինձ. Տուն գնացէք, Ֆրեդէրիկ հալրիկ. Աշխատեղէք հանդարտ երեալ ձեր մօրն ու աղջկան, ալս անհրաժեշտ է նոցա:

Եւ ճանապարհ ընկաւ, իսկ ես դարձակ տուն:

II.

Անցաւ երկու թէ երեք օր:

Քաղաք գնացի և Ուէրիի դեղատնից բերի բժիշկ Սէմ-պէրլէնի գրած գեղը. Տատը հանգստացաւ. հաղը պակասեց. նորան ասացինք, որ շուտով խաղաղութեան դաշն կկապեն, ամեն ինչ նախկին դրութիւնը կստանալ և Ժան Սէրլէնը լիտ կղառնալի. Խեղճ պառաւը կարծես թէ սկսից քիչ քիչ կաղդուրուել, երբ լանկարծ մի առաւօտ պրուսական երկու գաղտնի ոստիկաններ կանգնեցին պանդոկի մօտ. Նոքա սո-

վորաբար անցնում էին առանց կանգ առնելու, ուստի և եռաշատ զարմացալ ալս բանի վրալ, մի քիչ լետով, ծեր նկելվ աղջիկը եկաւ ասաց, թէ ինձ ներքեւ կանչում են.

Ես իջակ և տեսալ, որ դահլիճի մէջ տեղ կանգնած էին երկու չափահաս գաղանի ոստիկաններ՝ բարձր վզով կոչիկներ հագին, նոցա սաղասարտները գրեթէ առաստաղին էր հասնում, նոքա հարցրին թէ ես եմ Ֆրեդէրիկը, նախկին անտառապետը: Պատասխաննեցի՝ ալո. ապա նոցանից մէկը ձեռքի մէկից հանելով ահագին ձեռնոցը և ճանապարհի պարկը քրքրելով՝ մի թուղթ հանեց և տուեց ինձ, ես իսկոն կարգացի:

Դա հրաման էր Ֆալցբուրգի հրամանատարից, որ 24 ժամուալ ընթացքում հեռանամ արդ երկրից, Հասկանում ես, ծօրդ, թէ ինչ տոլաւորութիւն կդորձէր ինձ վերալ արդ, ես գունաթափ եղալ և հարցրի, ինչ եմ արել որ ալպէս զարհուրելի կերպով հալածում են ինձ:

—Այդ մեզ չէ վերաբերում, —պատասխաննեց նոցանից մէկը: —Ա;խատեցէք պատուէրը կատարել, ապա թէ ոչ ուրիշ միջոցներ գործ կդրուին.

Ասացին և ձի նստեցին. Էլ խելքս զլխիս չէր. ծերունի իկէլը, մենակ մնալով ինձ հետ և տեսնելով իմ սոսկալի վիճակը, չգիտէր ինչ մտածէ, և ասաց.

—Ի սէր Ալոտծու, Ֆրեդէրիկ, ասացէք, ինչ էք արել, Դուք ալնպիսի մի նշանաւոր մարդ չէք, և ալս խուլ անկիւնում կարելի էր ձեզ հանգիստ թողնել.

Ոչինչ չպատասխանեցի և ոչինչ էլ չէի կարողանում մտածել ու լիշել. մտածում էի զտոերս և պառաւ տատիս լուսատութեան մասին, երբ կլսէին ալս նոր զժրաղտութեան լուրը. Ալդ ժամանակ միայն մտաքերեցի իմ անզգուշ խօսակցութիւնը Վաշէրօն սրճատանը, Տուրակի հետ ունեցածս կռուի օրը. ծերունի իկէլը համաձայնեց իմ ենթաղրութեան հետ, որ Տուրակը մատնել էր ինձ. ինձ մի միջոց էր մնում. վազել հրամանատարի մօտ, որ մի քանի օր ժամանակ խնդրեմ, ի լարդանս տատիս հիւանդութեան, որ անշուշտ կմեռնէր ճանապարհն, իկէլը կանչեց դպրոցական վարժապետին, և ամենքս մէկտեղ դատաւորից պաշտօնական վկալական ձեռք բերինք, լաւ ցուցումներով իմ մասին և ընտանիքիս թշուառ կացութեան վերաբերմամբ. մէջը լիշուեցաւ ամսն բան, ինչ որ կա-

քող էր միան ազդել արսպիսի դէպքում։ Իկէլը առանձնապէս խորհուրդ տուեց գիմել բժիշկ Սէմպէրլէնի ; օգնութեան, որ նա վկալական տակ տատի հիւանդութեան մասին։ Նա կարծում էր, որ այս ամենը կարող են շարժել բերդապետի գութը և կլետաձգէ իմ աքսորը, մինչև որ խեղճ պառաւը կարող կլինի ճանապարհորդութիւնը տանել։

Ես ախնպէս աղմկուած էի, որ ալլ ևս անզօր էի բան մտածել և ուղերուեցալ դէպի հրամանատարը։

Վարդ-Մարին ոչինչ չփիտէր ալս մասին։ տատը նորնպէս, վրաս ոլժ չէր մնացել ալն նոր հարուածի մասին հաղորդել նոցա, որ սպառնում էր մեղ։ Միայնակ գնալ, ալդ բարբարոս-ներից փախչել, որոնք ախնպէս սառնասրտութեամբ ամեն թշուառութեան ենթարկում էին մեղ, դեռ էլի ոչինչ էր։ բայց տատս և Վարդ-Մարին... ևս վախենում էի մտածել անգամ նոցա մասին...։

Տասներկու ժամին մօտ եկալ Ֆալցբուրգ սաստիկ առեկոծուած։ մեղ հանդիպած բոլոր դժբաղտութիւնները պատկերացան աշքիս առաջ։

Ամենից առաջ թժշկին գնացի, որ մի վկալական տուեց, թէ իմ հիւանդ աատն ախնքան թոլլ է, որ անկարող է նորն իսկ երկու ժամուալ ճանապարհորդութեան դիմանալ։

—Ահաւասիկ, —ասաց նա թուղթը տալով, —ես միայն զուտ ճշմարտութիւնը գրեցի։ Դեռ կարող էի առելացնել, որ ձեր գնալը կարող է մահաբեր լինել նորա համար, բայց բերդ գապետը ուշք չի դարձնի ալդ բանի վրալ։ եթէ ալս վկալականը չհամոզէ նորան, մնացեալ ամեն ինչ անօգուտ կլինի։

Գնացի բերդապետի վարչութեան բնակարանը, որ զետեղուած էր նախսկին կառավարութեան մէջ կօլլէժ վողոցում։ Բան խնդրել ալս անպիտաններին, որոնց ես ախնքան արհամարհում էի, շատ ծանր էր ինձ համար։ ես—Փրանսիական էին անտառապետս, հալրենիքի հին ծառաս, մազերս ծառալութեան մէջ ճերմակած—պէտք է ստորանալի և ամենաչար թշնամիններիս խնդրէի, որոնք հպարտանում էին իրանց՝ լոկ միայն բազմաթիւ զօրքերի չնորհիւ կատարուած լաղթանակ-ներով։ Բայց տատիս, ձեր բրուատի ալրու համար պատրաստ էի ամեն ինչ տանել...։

Համազգեստ հագած և շէկ ալտամօրուքով մի բարձրահասակ պրուսացի երկար սպասել տուեց ինձ նախասկենե-

կում. բերդապետի ընակարանում նախաճաշում էին, և ամբողջ ժամ անցնելուց իտոյ միախ պատուէր ստացալ վերև բարձրանալ, Վերեր մի ուրիշ օրապահ նորից սպասել տուեց. վերջապէս ինձ թոլլ տուին ներս մտնել մի բաւական մեծ սենեակ որ նալում էր դէսի զօրանոցի պարտէզը. բաղխեցի բերդապետի սենեկի դուռը, որ ձախ տուեց թէ ներս արի, Իմ առաջ մի առողջակաղմ մարդ տեսալ, խիստ կարմիր դէմքով, որ անցուդարձ անելով սենեկում, համազգեստը ուղղում էր իւր վերալ և շատ վատ էր տրամադրուած. Ես համեստութեամբ պարզեցի նորան իմ դրութիւնը և մատուցի վկարականը, որ նա առանց նորն իսկ աչքի անցնելու՝ շպրտեց սեղանի վերակ.

—Ալդ բոլորը ոչ մի նշանակութիւն չունի, —ասաց նա կոպիտ կերպով. Դուք լաւտնի էք որպէս մի վտանգաւոր մարդ և զերմանացիներին լալտնի թշնամի. Դուք համոզեցիք ձեր ստորադրեալներին որ մեզ մօտ չծառալին. ձեր փետն միացել է Գամբեդտալի աւազակների հետ. Դուք պարծեցել էք մի սրճառանը, թէ մերծել էք Ցօրնշտադի օքէրֆէրատէրի առաջարկը. սոցանից աւելի նորադ պատճառ բաւական կլինին երկրից մարդ աքսորելու համար.

Ես կրկնեցի, որ տատս մերձ ի մահ հիւանդ է.

—Դէհ, ուրեմն թողէք տանը մեռնի, —ասաց նա. —աքսորի հրամանը միախ ձեզ համար է.

Ալլ ես չլսելով ինձ, նա ներս մտաւ դրացի սենեակը, ծառալին կանչեց իւր մօտ և դուռը փակեց ետևից.

Եռաւահաս վալր իջակ սանդուխքից, վերջին լրսա էլ խորտակուած. ինձ ոչ մի ելք չէր մնում. ստիպուած էի գնայլ, ստիպուած էի ալս ամենը լալտնել աղջկաս և տատին. Ես գիտէի, թէ ալս ամենը ինչով կվերջանար. գլուխս կախարած, անցաւ բակի դռնով և հասաւ զերմանական պահապանին, առանց նկատելու որ և է բան. Ամբողջ ճանապարհը, հովիտն ու անտառն անցնելիս ես ուշքի չեկալ և կարծես թէ ցնորուում էի լուսահատութիւնից. խօսում էի ինքս ինձ և դէպի ծառերը դառնալով՝ բարձրացնում ձեռներս.

—Անիծեալները ճնշում են մեզ... Մարդասիրութիւն, լանցանքի ամօթը, խզի խալթը —ամենն էլ ոտնակոխ են արած. Մնացել է միախ ոլժը. Գոնէ միանդամից սպանած լինէին մեզ ամենիս. Գոնէ ալս չարազործները անկողնի մէջ խեղդէին մահամերձ պառակին և դատերս դռանը կախէլին.

և ինձ էլ կտոր կտոր անէին... Այս աւելի լաւ կլինէր մեղ համար. Սա աւելի պակաս իրստ կլինէր, քան մեզ միմեանց դրկից խելը, որդուն չստիպելը, որ թողնէ իւր մեանող մօրը... Ես գնում էի դեղնելով: Ինձ թւում էր, թէ անտառները, խոռաշները, ժալաերը աւազակներով լիքն էին, որոնց մասին շատ էի լսել մանկութեանս ժամանակ. թւում էր, թէ լսում էի նոցա երգերի ձանը խարոլկի շուրջը, լափշտակած աւարը՝ բաժանելիս մեր մեծ լեղափոխութիւնից առաջ տեղի ունեցած բոլոր սարսավիները նորոգուեցան աչքիս առաջ: Ժայռերի արձագանքը կրկնում էր լալրենի նոռադի ձանը, որ ճշում էր պրոտական փողը ֆալցբուրգում և կարծես թէ դուրս էր կանչում ալն չարագործների ստուերները, որոնք մոխիր էին զառել տասնեակ տարիներ առաջ:

Գրառուֆտալի աները տեսնելով՝ ուշի եկալ. սոսկացի, երր միտս եկաւ, որ հնչել էր Վարդ-Մարիին և տատին՝ տարագիր լինելու լուրը լալտնելու ժամը, ինձ համար դա համազօր էր մահուան դատավճռի, որ պէտք է արտասանէի նոցա առաջ, որոնց ամենից շատ էի սիրում աշխարհում: Ես դանդաղեցրի քալերս, որպէս զի ուշացնեմ ալդ բոսէն, բայց անցնելով մի երկու տուն, տեսալ Վարդ-Մարիին, որ սպասում էր ինձ դէպ ինէլի պանդոկը տանող ծառաստանում: նորան նաւելով՝ գուշակեցի, որ ամեն ինչ լալտնի պիտի լինէր իրան: — Հը, ինչ կալ, հալրիկ, — հարցրեց նա ինձ հանդարտ, երբ տանը մօտեցանք:

— Ես պէտք է հեռանամ, — պատասխանեցի կարելուն չափ հանդարտութեամբ, բայց դուք կմնաք... ձեզ թոլլ է արրուած մնալ:

Մինուոն ժամանակ ես վերևից տատի հեծեծանքը լսեցի: Հէնց որ ես դորս դնացի, և ատէլը վերև վազեց և մեր նոր զժքաղտութիւնը հաղորդեց Վարդ-Մարիին. խեղճ պառաւը լը-սեց ամենը: Այս նորութիւնը տարածուեց ամբողջ գիւղում: ամբոխը խռնուեց մեր շուրջը, և տեսնելով, որ հնար չկալ ալս դժբաղտութիւնը վերացնել, ամենքին պատմեցի, թէ ինչպէս կոպիտ ընդունեց ինձ պրուսական բերդապետը: Հարևաններն ուշադրութեամբ ականջ էին դնում ինձ, բայց ոչ չէր վստահանում ձախն հանել, վախենալով որ նոյն վիճակի չենթարկուին:

Տատին իմ ձախնը ճանաչեց և կանչեց.

— Ֆրեղէրիկ... Փրեղէրիկ...

Ակդ ձախի լոկ միայն հնչիւնը ճակատիս վերալո, խոշոր կաթիւներ արտադրեցին, ևս պատասխանեցի, զեր ենելով.

— Գալիս եմ, տատիկ, զալիս եմ... Հինչու ևս ալգոքչո բառահատւում, Երկար ժամանակով չենք բաժանուելու... ևս չետ կդառնամ.. Ավժմ ինձնից քաշում են.. Նոքա սիսալում են, տատիկ... Բայց նոքա ուժեղ են մեղնից...

— Ա, — գոչեց նա, դուք դնում էք, Ֆրեղէրիկ, դուք գնում էք, ինչպէս խեղճ ծանը... ևս գիտէի, որ նա կուելու է գնում... ամենը գիտէի... ևս ձեզ ալլ ևս չեմ տեսնի — ոչ մէկիդ և ոչ միւսիդ,

— Ինչու, տատիկ, ինչու, Մի քանի շաբաթից լետով ինձ թուլ կարուի լետ զառնալ... և ժանն էլ լետ կդառնալ երբ պատերազմը վերջանալու...

— Ես ալլ ևս չեմ տեսնի ձեզ, — աղաղակեց նա, հեկեկալով:

Մարդիկ հետաքրքրուող են լինում մինչեւ խստութիւն, ալդպէս էր և ար անգամ. բոլոր շրջապատողները մէկը միւսի ետեից բարձրացան իմ ետեից և մեր երեք փոքր սենեակները լցուեցան ամբոխով, ամենքը աշխատում էին աղմուկ չանել և, որ ձախ հանեն, մաշիկները հանեցին սանդուխի ներքեւում. նոքա ուզում էին ամենը տեսնել, ամեն բան լսել. բայց մեծ գորշագոյն վարագուրի ետեից տեսնելով թշուառ պառաւին, որ հեկեկալով ձեռները տարածել էր դէպի ինձ, գրեթէ ամենքն իսկուն հեռացան. Մնաց Շտարկը, ծեր իկէլը և նորագուատը կատէլը,

— Աննա աատ, — ասաց իկէլը, — չպէտք է ալդպէս լուսահատուել, Ֆրեղէրիկն արդար է. . Պէտք է խոհեմ լինել... Հէնց որ խաղաղութիւնը կտիրէ, ամեն ինչ նախկին դրութիւնը կստանալ, Դուք 83 տարեկան էք, իսկ ես մօտ 70... Ես լուս ունիմ տեսնել ժանին, Ֆրեղէրիկ պապին և ալստեղից գնացող ամենքին...

— Ա՛խ, — պատասխանեց նա, ևս խիստ շատ եմ զրկանք կրել և էլ տանել չեմ կարող.

Եւ մինչեւ ուշ գիշեր նա հեծում էր.

Վարդ-Մարին, որ երբէք անվեհերութիւնը չէր կորցնում, պահարանը բաց արաւ, միջից հանեց իմ իրերը, որովհետեւ ժամանակ կորցնել չէի կարող, միւս առաւօտ հարկ կար ու-

զմորուել, Նա սեղանի վերալ դարսեց իմ լաւ չորերն ու փոխնորդը և հանդարտ հարցրեց նորն միջոցին, երբ տատը լավու էր.

—Այս կվերցնես, հալրիկ! Իսկ ալիք.

Ես պատասխանեցի նորան.

—Դարսիր ինչպէս խելքէ կտրում է, որդիս Նս մտածել անկարող եմ: Չմոռանաս միայն պաշտօնազգիստս դնել. դա ամննից կարևորն է:

Իկէլը, գիտենալով, որ ազատ վալրկեան չունէինք, առաջարկեց, որ մենք երեկոյի համար ոչինչ չպատրաստենք և նորա հետ ընթրենք ներքներ. համաձայնեցանք:

Ակդ երեկոյ, ժօրժ, ընթրելիս քիչ խօսեցինք: Կտտէլը մնաց վերև տատի անկողնի մօտ: Գիշերը հասաւ, իրերս դարսած էր, և ամենքս վաղ քնեցինք: Կհաւատաս, որ ես գրեթէ չքնեցի: Տատի հեծեծանքը և իմ խոհերը թէ ուր պիտի գնամ, փողի պակասութեան մասին ճանապարհի համար,—որովհետեւ պէտք էր տանն էլ թողնել ծախսի համար,—ալս ամենը լուզում էր ինձ, և չնայելով լոգնածութեանս՝ աչք չփակեցի: Ամբողջ գիշեր ինքս ինձ հարցնում էի ուր գնամ, ում դիմեմ, ինչնո՞վ հաց վաստակեմ. ալս ամենն հարցերը հարիւրաւոր անգամ պատու եկաւ զլսումս, և վերջապէս լիշեցի պ. Արանսին, մի լաւ տղամարդու, որ ինձ միշտ սիրում էր և որի իշխանութեան ներքով, շատ տարիներ առաջ. ծառալել էի իրեն հասարակ անտառալին պահապան: Ինձ ասացին որ նա կենում է Սլէնտ-Գիէում, և եօ լուս ունէի որ եթէ նորան ողջ գտնեմ, նա ինձ կընդունէր և կոգնէր թշուառութեանս մէջ: Այս միտքը ծագեց իմ մէջ առաւտեան դէմ: ես հանգստացալ և մէկ թէ երկու ժամ քնեցի:

Հազիւ լուսացած արդէն ոտի վերալ էի: Զարհուրելի բրոպէն մօտենում էր, տատը ոտնաձայնս լսելով՝ կանչեց ինձ:

Վարդ-Մարին ևս վեր կացաւ. նա նախաճաշ պատրաստեց, իսկ Իկէլը վերև բերեց մի շիշ զինի:

Հագնուռելով՝ մտայ տատի սենեակը, աշխատելով՝ անվեհեր երեալ, բայց զգում էի, որ ալլ ես տեսնելու չէի նորան:

Տեսքով հանդարտ էր նա, ինձ պատուիրեց մօտ գնալ և երկու ձեռքով փաթաթուեց վզիս ու ասաց.

—Զաւակս: Դու ինձ համար եղել ես միշտ իսկական, բարի զաւակ: Որդի Ֆրեդէրիկի, օրհնում եմ քեզ... մաղթում

եմ քեզ կտտարեալ երջանկութիւն, որին արժանի ես... Բայց... խեղճերի բարի ցանկութիւններն ու օրհնութիւնները մի բանի չեն հասցնում... Ալլապէս, սիրելի Ֆրեդէրիկ, ալղափս դժբաղտ շէիր լինի...

Նա լաց էր լինում, ես չկարողացալ արտասուզս զսպել։ Վարդ-Մարին, անկողնի մօտ կանգնած հանդարտ հեկեկում էր, դրկելով տատիս՝ ասացի,

— Ձեր օրհնութիւններն ու բարի խօսքերը աշխարհիս բոլոր զանձերից աւելի են ինձ համար. միսիթարուում եմ, որ շուտով կաեսնեմ ձեզ.

— Գուցէ մենք միւս կեանքում կտեսնուինք,—պատաս. խանեց նա, բայց ալստեղ, աշխարհումս, անջատւում եմ քեզ. նից... Մնաս բարեաւ—Ֆրեդէրիկ, մնաս բարեաւ...

Եւ զրկելով՝ նա համբուրեց ինձ դողդոջուն շրթունքներով, լեռոլ, շուռ զալով՝ ձեռքիցս բռնեց և նորից հեկեկալով՝ հանդարտ շնչաց.

— Մնաս բարեաւ

Սս դուրս գնացի. ուժաթափ էի եղած.

Դրացի սենեկում մի բաժակ դինի իմեցի և մի կտոր. հաց դրի զրպանու

Վարդ-Մարին ինձնից չէր հեռանում, ես նշան արի նորան և պատուիրեցի վալր իջնել, որ տատը մեր հրաժեշտի հեկեկանքը լլսէ.

Մենք լուռ մտանք դահլիճ, ուր ծեր Իկէլը ուրիշ բարեկամների հետ սպասում էին մեղ. ալստեղ էր Շտարկը, որ մեղ օդնել էր անտառի տնից տեղափոխուելիս, Գիւլօտը, և մի քանի էլ բարի ծանօթները.

Մենք հրաժեշտ տուինք միմեանց. դուրս գալով, ես զրկեցի Վարդ-Մարին, ինչպէս կարող էր միան դրկել մի դժբաղտ հալր իւր զաւակին, համբուրեցի, ցանկալով դորանով ալն ամենը, ինչ որ կարող է մարդ ցանկալ ալն էակին, որ իր կեանքից աւելի թանկ է և որին նա լարդում է բարերարութեան, բարութեան և քաջութեան համար. Կապոցը ուսիս ձգելով՝ գնացի առանց լետ նալելու.

ԼԳ.

Աքսորի ճանապարհը երկար է, ժօրժ, և նորա առաջին քալերը ծանր են. Ով որ ասել է, թէ հալրենիքը հետներո-

տանել չենք կարող, լաւ է հասկացել մարդկալին տանջանքները։ Դեռ հալրենիքի հետ ալժմ զաւակն էլ պէտք էր թողնել, իսկ ականջումս հնչում էին տատի հրաժեշտի ձախները։ Սարը բարձրանալով՝ նախ քան ցած իշնելը՝ մի վերջին հալեացք ձգեցի տնակիս և ալզուս վերալ ու մոտածեցի։ «Էլ չես տեսնի այս ամենը»։ Ալսպիսի վալկենին, ծճրժ, թւում է թէ երկիրը լետ է պահում քեզ, ծառերը տարածում են դէպի քեզ իրանց ճիւղերը։

Ալս ամենն զգացի թէրիխնդէնի գագաթին։ գեռ էլի սարսափում եմ այս ամենը լիշելիս։

Երբ մտածում ես, որ ալսպիսի չնչին արարածներ կարող են ալդ տեսակ տանջանքներ պատճառել իրանց մշրձաւորներին... Թող Ամենակարողը ներէ նոցա, արդարութեան ժամը կհնչէ մի օր։

Դուրս խլուելով ալդ տեղից, առաջ գնացի։ Ցած իջալ լեռնից, և հարազատ երկիրը կամաց կամաց հեռացաւ ինձանից։ Օ՛հ, ինչպէս տանջուեցի և ինչպէս շատ բան էլ մտարերում։ Անտառներ, եղննուտ, գարեջրի հին գործարաններն անլալտացան...»

Մօտեցակ Շէնբուրգին և սկսալ իջնել երկրորդ բարձր գաղաթից, լնկղմուած մտածմունքներիս մէջ, երբ լանկարծ մի լիսուն քայլ հեռու ինձանից ծառերի միջից երևեցաւ մի մարդ հրացանն ուսին։ Նրբ նորան տեսալ՝ բոլոր մտածմունքներս չրուեցին։ ճանաչեցի Խէպպին, նախկին անտառապետին, որին զրաւեցին պրուսացիներն և որը միալնակ մեր ամենիս մէջ մտաւ նոցա ծառալութիւն։

—Դուք էք, ֆրեղէրիկ հալրիկ, —հարցրեց նա զարմացած։

—Ալն, ես եմ։

—Ո՞ւր էք գնում ալսպէս վաղ կապոցն ուսիդ։

—Ուր որ Աստուած կառաջնորդէ... գերմանացիք հալածում են ինձ... Ուզում եմ հաց վաստակել մի ալլ տեղ։

Նա ամբողջապէս զունատուեց։ Ես կանգ առալ, որ շունչ քաշեմ։

—Ի՞նչ, ասաց նա, —ալդ տարիքում ձեզ աքսորում Բն. ձեզ, ծեր անտառապետիդ, ազնիւ մարդուն, որ ոչ ոքին վատութիւն չէ արել։

—Ալն, չեն ցանկանում ինձ իմ երկրում թողնել 24.

Ժամ է միայն ժամանակ տուած ինձ, որ Ելզասից դուրս գնամ. և ահմ գնում եմ...

— Իսկ Վարդ-Մարին, հապա տանը.

— Նոքա Դրառնֆոտալ են ծեր Իկէլի մօտ. Տառը մնանում է... մէկը հալբաթ կը թաղէ.

— Խէպպը, գլուխը կախնելով՝ գետնին նալեց և ասաց.

Դ'նչ դժբաղտութիւն... Ինչ դժբաղտութիւն...

— Ես ոչինչ չպատասխանեցի և քրտինքս սրբեցի երեսիցս. Մի բոգէից, առանց ինձ նալելու, նա հաղաց և հանգարտ ասաց.

— Ա՛յօ, եթէ մենակ ես ու կինս լինէինք. Բալց վեց էլ որդի ունիմ... Նոյա հալրն էլ եմ... Զեմ կարող թողնել որ սովոր մնանեն... Դուք մի քիչ փող ունէիք հաւաքած... ևս մի ունտիմ էլ չունէի.

Տեսնելով, որ ալս մարդը, որ անտառս պետի պաշտօն էր ստացել գերմանացիների մօտ, ներումն է խնդրում ինձանից, դժբաղտ աքսորականից, և չիմանալով ինչ պատասխանեմ՝ ասացի.

— Աստումն իմ, ամեն մէկն էլ ունի իր միծ ցաւը. Ցաեսութիւն... ցտեսութիւն.

Նա ուղեց ձեռքս սեղմել, բալց ես առանց լեռ նալելու գնացի, մտածելով.

«Այս մարդը, Ֆրեդէրիկ, քեզանից աւելի դժբաղտ է, սորա վիշտն աւելի մեծ է. Նա ծախեց իւր խիղճը պրուսացիներին մր կտոր սև հացի համար. Դու գէթ կարող ես ամենքի աչքերին նալել. Դու կարող ես, չնալելով աղքատ վիճակիդ, ասել. ես աղնիս. մարդ եմ... Բալց նա չի կարող նալել իւր հին ընկերոջ երեսին. կարմրում է և զլուխը կախում, Գերմանացիք, օգտուելով ալն հանգամանքից, որ նա վեց օրդի ունի, գնեցին նորանո.

Չնալելով դժուար զրութեանս՝ զգում էի, որ լաւ վարուեցի. Խէպպի տեղ որ լինէի, վաղուց արդէն մի տեղ ինձ կախել էի անտառում. Մարդս միշտ գոհ է, եթէ նորան լաջորում է երկու շարիքից փոքրագոլնն ընտրել.

Այս մտքերին շուտով ուրիշները փոխարինեցին.

Պէտք է ասեմ քեզ, որ ամեն զիւղերում, մինչև անդամ ամենախեղճ շէներում, որոնց միջով անցալ, խեղճ մարդիկ, տեսնելով որ ալս տարիքում գնում եմ կապօցն ուսիս, ամեն

կողմից ուրախութեամբ էին ընդունում ինձ. նոքա հասկանում էին, որ ես մէկն էի նոցանից, որոնց աքսորում էին Ֆրանսիան սիրելու համար. կանալք, դռներին երեխաների ձեռքերից բռնած, ուղերում էին ինձ ալս խօսքերով.

—Թող Աստուած օգնէ Ձեզ...

Լիւացէլլուրգի, Դօքոի և ուրիշ տեղերի մանր հիւրանոցներում, ուր ես ժամանակ առ ժամանակ հանգիստ էի առնում որ ոլժերս նորոգեմ, ոչ ոք չէր ուզում փող վերցնել ինձանից, երբ ես ասում էի, «Եին անտառապետ եմ. գերմանացիք քշում են ինձ, որովհետեւ մերժեցի ծառալել նոցա»... Ամենքը յարդութեամբ էին վարւում հետու:

Ի հարկէ, ես չօդուեցի ալս մարդոց բարութիւնից և ամեն բանի համար վճարում էի. ալս խիստ հարկահանութեան ժամանակ ամեն ոք դրամի կարիք ունէր.

Այս բոլոր երկիրը լեղափոխութեան կողմնակից էր. որքան աւելի էի մօտենում Վոզէզամին, այնքան լաճախ էին լսում Գարիրալդու, Գամբէտտալի, Շանդի, Ֆէդէրիքի անունները. բայց այնքան էլ աւելի նկատելի էր դառնում ծանր հարկահանութեան հետևանքներն ու յաճախ էին պատահում դօրքից աւերուած գիւղերը.

Նոյն օրը երեկուեան 8 ժամին հասանք Շիրմէկ. Հիւրանոց մտնելով՝ տեսալ Փէլդֆէրլին, հարկահանին և կօմմիսարին, որոնք սեղանի շուրջ նստած՝ խմում էին և ծխում իրանց հայրենակիցների հետ. Ամենքը լսու նալեցին և աշք չէին հեռացնում - ինձնից, երբ ես խնդրեցի մի գիշերուալ համար օթոց:

Կօմմիսարը պատուիրեց որ թղթերս ցոլց առամ. Ուշադրութեամբ աչքի անցնելով բոլոր ստորագրութիւններն ու կնիքները, նա ինձ ասաց.

Մինչեւ աւժմ ամեն բան կարգին է, բայց վաղը արեց չծագած ճանապարհին պէտք է լինեա.

Սիս խօսքից լսուու միախ հիւրանոցի տէրը վստահացաւ թոլլ տալ ինձ ուտել և խմել. հիւրանոցը լիքն էր պրուսացի-աստիճանաւորներով, և ինձ տարան քնելու կալում, ուր քնեցի լաբդի վերաբ. Դուրսը խիստ ցուրտ էր, բայց կալը գոմի մօտ էր, ուստի և տաք էր ալնտեղ. ես խորը քնեցի, որովհետեւ խիստ լողնած էի. Քունը, ծոլժ, մխիթարութիւն է

դժբաղտների համար. եթէ որ ևս խօսէի Աստուծոյ բարութեան մասին, ապա կասէի, որ նա ամեն օր մի քանի ժամով կանչում է մեզ իւր մօտ որպէս զի կարողանանք մնը թշուառութիւնները մոռանալ:

Միւս օրը լուսանատութեանս փոխարինեց աւելի առողջ արամեադրութիւն. ես ուղեորուեցի դէպի Ռօտառու, Յիլեցի ժան Մէրլէնին. Գուցէ նա էլ ալս ճանապարհով էր գնացել, ինչպէս ամենից կարճ ճանապարհու. Որքան բաղտառոր կլինէի, եթէ նորա շաղում ընկնէի, իմանալի որև է բան նորա մասին և հաղորդէի Վարդ-Մարիին.—Ինչ միսիթարութիւն կլինէր ալս մեր անբաղդ վիճակում. Դժուար էր լուսալ ալս բանի վերալ—ալնքան շատ ժողովուրդ էր անցել վերջին երեք ամսուան ընթացքում Ռօտառուից Փրովանշէր, Փրանսիացիներ, գերմանացիներ, օտարականներ, որոնց ոչ ոք էլ չէր ցիշում:

Բալց ես ալնուամենալնիւ չէի կարող Ժան-Մէրլէնի մասին չմտածել...

Ճանապարհու շարունակելով, հիանում էի ալս լեռնալին երկրի գեղեցիկ անտառներով. ճանապարհը պատող խիտ եղէինները լիշեցնում էին ինձ ֆալքրդի եղենները՝ Սալէրնի մօտ. նոցա տեսքը լուզում էր ինձ. թւում էր, թէ հին ընկերներն ինձն ուղեկցում ինձ, որ մի քանիժամ միասին անցնենք, վերջին մնաս բարեն ասելուց առաջ. Շարժողութիւնը, լեռնալին պարզ օղը, բարի մարդկանց սիրալիր ընդունելութիւնը, իմ հին իշխանաւոր Արանսին գտնելու լրսու, և մանաւանդ իմ ցանկութիւնը որ լուսահատութեան անձնատուր չինեմ մինչդեռ խեղճ գուստը և պառաւ տատը դեռ ալնքան խիստ կարիք ունէին իմ օգնութեան, ալս ամենը որդ էր տալիս ինձ և շարունակ խրախուսում էի ինձ:

Ֆրեդերիկ, մի վհատուիր... դեռ բոլոր Փրանսիացիք չեն կորել... վերջապէս կվերադառնալընախկին՝ լաւ՝ ժամանակը... Ով լուսահատում է՝ կորչում է. խեղճ թունիկները, որոնց ձմեռը ստիպում է ուիրանց բոյնը ձիել գնեսու տեղ են թուչում որոնելու տաքութիւն, միջատներ և հատիկներ. նոքա ևս չարչարում են, բայց գարնան նորից լետ են դառնում... Սա օրինակ պէտք է լինի քեզ... քեզ համար էլ լաւ օր կդալ... Մի փոքր որժ էլ, և կհասնես Սէնտ-Դիէ և կտեսնես պ. Արանսին, որ քեզ կալաշտպանէ», Ալսպիսով սիրտ

տալով ինձ՝ դեռ լուս էր որ տեղ հասալ, բայց խիստ լոգնած։ Մտալ առաջին հանդիպած հիւրանոցը, մի գաւաթ զինիով ամրացրի ինձ և պ. Արանսի մասին իմացակ, որ նա դեռ էլի Սէնտ-Դիէռումն է և վարում է իւր նախկին՝ վերատեսչի պաշտօնը։ Դա ինձ շատ ուրախացրեց. բայց ես անպէս լոգնած էի, որ հաղիւ էի ոտի կանգնում. բարեբաղտաբար ինձ լաջողուեց անկողին գտնել, ուր ես աւելի լաւ քննցի քան Շիրմէկի կալում։

Բայց առաւօտը վաղ ինձ դարթեցրեց պրուսական փողհարը, սլրուսական գնդերից մէկը բռնել էր ալդ քաղաքը. գնդապետը տեղաւորուել էր եպիսկոպոսի տանը, իսկ սպաները և զինուորները՝ քաղաքի բնակիչների մօտ. խոտի, չարփի, մօի, ալիւրի, ջրի, ծխախոտի և ալլ հարկահանութիւնը նորնքան խիստ էր Սէնտ-Դիէռում, ինչպէս և ուրիշ տեղերում։

Ես կապոցից հանեցի մաքուր շապիկս և պաշտօնազգեստս հագաւ, լիշելով, որ պ. Արանսը միշտ մնծ ուշադրութիւն էր դարձնում, որ ծառալողները զալելու լինին հաղնուած։ Այնուհետև իջալ հիւրանոցի դահլճը, իմանալու թէ ուր է կենում նա։ Բարի պառաւ Օրին, հիւրանոցի տիրուհին, ինձ հաղորդեց որ նա բնակում է կալարանի մօտ և ես անբապաղ ուղի ընկալ Ծղանսակը պարզ էր, ցուրտ, տաճարից դէպի կալարանը տանող փողոցը ձիւնից բոլորովին սպիտակած էր, նորնպէս և շրջակալ բարձունքը։

Գերմանացի զինուորները, երկար մոլու վերարկուներով և տափակ զիսարկները զիխներին մէրիի համար սալլով ուտեսաի պաշար էին տանում, երկու թէ երեք շոպասուհիներ դոլերը լցնում էին գեղեցիկ աղբիւրի մօտ։ Ուրիշ մարդ չէր երեսում, —ամենքը փակուել էին աներում։ Պ. վերատեսչի դըրանը երկու րոպէ կանգնած մտածելով, տեսակ որ առաջս իջաւ. վերեից մի գեղեցիկ տղամարդ կանաչ, արծաթէ շերանը զարդարուած գլւարկը գլխին որ մի փոքր քաշած էր ականջներին։

Դա պ. Արանսն էր, դարձեալ նոյն լաղթանդամ մարդը, մուգ միրուքով և գէմքի անպիսի թարմ գոյնով, որ կարծես երեսուն տարեկան լինէր. ես նորան իսկոյն ճանաչեցի։ Միաւն գլււխը մի փոքր ճերմակել էր, ասա թէ ոչ բոլորովին չէր փոխուել. բայց նա ինձ սկզբում չճանաչեց, և երբ միան

մտաբերեցի նորան իւր նախկին անտառալին պահապան Ֆրե-
դերիկին, նա գոչեց,

—Դուք էք, իմ խեղճ Ֆրեդերիկ. Երեսի գործդ երի-
տասարդութեանդ պէս չէ գնում.

Նս արդէն երիտասարդ չէի, և վերջին ամիսները չափա-
ղանց ծերացրել էին ինձ, խոստվանուում եմ,

Վերատեսուչն ուրախ էր որ ինձ տեսնում էր.

—Գնանք վերև, —ասաց նա, —այնտեղ աւելի լարմար-
է խօսելու համար.

Եւ բարձրացանք.

Անցանք մեծ, մութ գրասենեկով, որի վեղկերը ծած-
կուած էին, ապա վերատեսչի առանձնարանը, ուր վառարա-
նը թէժ վառւում էր. նա ինձ աթոռ հրամցրեց, և մենք եր-
կար խօսեցինք մեր զժբաղդ երկրի մասին, Ես նորան պատ-
մեցի մեր ամեն ձախորդութիւնները գերմանացիների արշա-
ւանքից սկսած, նա ինձ լսում էր, շրթունքները սեղմելով՝
դրասեղանի վերալ թեք ընկած, և վերջապէս չամբերելով՝
աղաղակեց.

—Ալօ, զարհուրելի է... որքան աղնիւ մարդիկ են զո-
հուել մի քանի անպիտանների եսականութեան... Մենք խիստ-
կերպով տուժում ենք մեր սխալների համար. բայց գերմա-
նացիների հերթն էլ կդաւ, թանը դրանում չէ. դուք երեսի առ-
մենը ծախսել էք... պէտք ունիք.

Ի հարկէ, ես նորան ասացի ճշմարիտը. ասացի, որ ստի-
պուած եղալ տանը թողնել բոլոր ինչ որ ունէի և զոր-
եմ պտուում:

Նա, հանդարտ բանալով սեղանի դարակը ասաց, որ ես
իրաւունք ունիմ, ինչպէս և նշանակ միւս բոլոր անտառա-
պետները, ստանալ իմ վերջին քառամսեկի ունիկը, որ
տալիս է ինձ կանխօրօք, իսկ ժամանակին կհաշուենք.

Նս շատ ուրախ եղալ որ ալսպիսի նեղ օրիս դրամ ստա-
ցալ. տեսչի ուշադրութիւնը արցունք քամեց աչքերիցս, և
չգիտէի թէ /նշպէս լալտնեմ շնորհակալիքս:

Պ. Արանսը տեսաւ թէ որ աստիճան խորը կերպով զգա-
ցուած էի և երբ փորձ փորձեցի շնորհակալութիւն լալտնելու,
ասաց.

—Լաւ... լաւ, Ֆրեդերիկ... էլ չխօսենք ալդ մասին...
Դուք փառաւոր մարդ էք..., անկեղծութեամբ նուիրուած Ֆրան-

սիալին, և ես շատ ուրախ եմ, որ կարողանում եմ ծառալել ջեղ։

Սրբ հրաժեշտ տուինք միմեանց, պ. տեսուչը հարցրեց, թէ մեր անտառալին պահապաններից շատերն են միացել զօրքին։

Ես կէրնի և Դօնատիեի անունները տուի, ապա արդէն ժան-Մէրլէնի, աւելացնելով, որ սա ամենից վերջը գնաց և հաւանորէն գնաց նոյն ուղիով, որով և ես, Խերմէկի և Ռոտառի վրալով։

—Բարձրահասակ երիտասարդ, —հարցրեց նա, սև բեղերով, չե։

—Արմ, պ. աեսուչ, —պատասխանեցի, խիստ լուզուած, —իմ փեսաս է։

—Փառաւոր ջահիլ է, —ասաց նա, —ալս կողմով անցաւ Ես տուի նորան անհրաժեշտ ցուցումներն և միջոց մինչև Տուր հասնելու Եթէ անհանգիստ էք նորա մասին՝ ապահով եղէք. միացաւ զօրքի, արդէն իւր տեղումն է։

Իջանք սանդուխաններից. մնաս բարեին պ. Արանսը ձեռքս սեղմեց, լետու գնաց դէպի կամուրջը, իսկ ես գնացի երկաթուղու կալարանը, շատ լաւ տրամադրուած։

Ես վաղօրօք նախազգացի Վարդ-Մարիի ուրախութիւնը. ինձ թւում էր արդէն, որ լսում եմ, թէ ինչպէս տատը գոհանում է Աստծուց, լսելով ալս աւետիքը. թւում էր, թէ մեր թշուառութեանց վերջն եկել է, խաւարը ցրում էր և արեգակը նորից լուսաւորում է մեզ. Ես գնում էի լի պահճառ լուսերով և ուրախական մտածմունքներով. և հէնց որ մտաք «Ոսկէ Առիւծ» հիւրանոցը, պառաւ Օրին, նալելով ինձ՝ աղաղկեց։

—Ա՛, ինչ որ մի շատ լաւ բան է պատահել քեզ։

—Արմ, —պատասխանեցի ժպտալով. —Ես ալս ալն չեմ, ինչ որ երեկ երեկու, մեծ անբաղդութիւնները միշտ միննոյն մարդկանց չեն ջախջախում. —Եւ պատմեցի ինչ որ անցել էր. Նա ուրախ և կանջ էր գնում. բայց երբ թուղթ խնդրեցի, որ ալս բոլորը զրեմ Գրառուֆտալ, նա սկսեց լետ համոզել։

—Լաւ մոտածել էք ձեր դիտաւորութեան մասին. Ուզում էք գրել որ ձեր փեսան միացել է զօրքին, որ ճանապարհին փող է տուել նորան պ. Արանսը. Բայց պ. տեսչին վաղն սեթ կձերբակալին, և ձեզ էւ, ձեր քրոջն էլ. Միթէ ձեզ լաւտնի չէր

որ գերմանացիք բաց են անում բոլոր նամակները, սա ամենալաւ եղանակն է մեզ լրտեսելու, նոքա շարունակ առիթներ են որոնում քաղաքի վերալ տուգանք դնելու, Ալզափիսի մի նամակ բաւական է, որ նոր տուգանք խլէ մեղանից, Զգուշացէք ալդ տեսակ մեծ անզգուշութիւնից:

Զգացի, որ պառաւ Օրին ճիշտ է ասում, և վայրկենաբար ուրախ արամադրութիւնս կորաւ. անքան ոլժ հազիւ մնաց վրաս որ գրէի ՎարդՄարիին, թէ տեղ հասալ, լաւ եմ և փոքրիկ նպաստ ստացալ նախկին իշխանաւորիցս. Ամեն բան աւելորդ էր թւում ինձ, վախում էի աւելորդ կէտ, ստորակէտ զնելուց, որ պատճառ չդառնար անդիտաններին նամակիս պոչից բանել և ինձ աւելի հեռու քշել.

Ի՞նչքան զժուար բան է, երբ մարդ հնար չէ ունենում լուսոլ և մխիթարութեան մի խօսք զրել նոցա, որոնց սիրում ես, մանաւանդ արդափիսի սոսկալի ժամանակի. Եւ ինչքան խիստ պիտի լինին մարդիկ, որ լանցանք համարեն հօր համար մխիթարութեան խօսքերը, որ ուզում է լուր զաւակին, բարի լուրը, որ ուզարկում է որդին իւր մեռնող մօրը, թէպէտ սա հաւանական էլ չէ, սակայն և ախպէս մենք մեղ վերալ կրեցինք ալս խստութիւնները,

Մերձաւոր մարդկանց մահը և երկրի նոր անլաջողութիւնները գուժող նամակները տեղ էին հասնում, դեռ կեղծ նամակներ էլ էին հասնում զերմանացիների լաղթութեան և ֆրանսիացիների կրած նոր պարտութեանց մասին:

ԼԴ

Զվատահանալով գրել իմացածներիս մասին և ոչինչ լուր չստանալով տանից՝ ես տիրեցի:

Նրեակալիր, Ժօրժ, իմ հաստկի մի մարդ, մատնուած միալինակ կեանքի օտար մարդկանց մէջ հիւրանոցի վոքքիկ սենեկում, գործից կտրուած, որ ամբողջ ժամերով ստիպուած էր նալել միալն թէ ինչպէս է ձիւն գալիս, կամ ականջ զնում փողոցի աղմուկին, անցնող սալլակի անիւների ճրճուցին, անցորդների աղմուկին, չների հաշոցին կամ պրուսական զօրախմբի շրջագալութեան—առանց ամենմին զուարճութեան, բացի իւր խոհերից ու լիշողութիւններից:

Ժինչ-որդ կատարւում է Գրառուֆտալում։ Տատը դեռ կենդանի է, Խնչ եղան Վարդ-Մարին... ժանը... և ուրիշ ամենքը։

Եւ շարունակ նոյն հոգսերը, նոյն ծանրութիւնը սրտի վերալ։

«Նամակ չկալ, աւելի լաւ. որև է դժբաղտութեան դէպքում Վարդ-Մարին կգրէր ինձ, կամ զուցէ նա Էլ հիւանդացել է։

Եւ ալսպէս ես անդադար տանջւում էի առաւօտից մինչ և երևիոր։

Երբեմն, երբ հիւրանոցի սեղանատնից աղմկալի զրոց էի լուսմ, իջնում էի ներքեւ պատերազմի մասին որ և բան իմանալու Յոլսը—մեր կեանքի աչս ամենամեծ կեղծիքը—այն աստիճան արմատացած է մեր հոգում, որ մենք շղթալում ենք նորա հետ մինչև վերջին շունչներս։

Սեղանատանը ամեն տեսակ մարդու հանդիպում էի. վաճառական, գիւղացի, կառապան. ամենքը աղմուկով խօսում էին Հիւսիսում, Արևելքում կատարուած ճակատամարտերի, կողոպտումների, հրացանաձգութեան, հրդեհների, խիստ հարկահանութեան և նման իրերի մասին։

Պարիզը շարունակ պաշտպանում էր. բայց Լուարի մօտ մեր նոր կաղմակիերպուած զօրքերը ստիպուած էին նահանջել. գերմանացիների մեծ մասը խիստ ճնշող էին։ Նոքա ամեն կողմից հաւաքուել էին բոլոր երկաթուղիներով. բացի սորանից մեզ պակասում էր հրացան և պատերազմական պաշար։ Մեր ձեռաց հաւաքած երիտասարդ բանակը, պարտաւոր էր օգնութիւն հասնել աշխարհիս ամենախիստ պատերազմին և վերջիվերջու ընկնել նորա չափազանց ծանրութեան տակ։

Այս ամենքը մենք կարդացինք բերգիական և շվեյցարական լրագիրներում, որ «Ուսկէ առիւծ» հիւրանոց երթեւկողները պատահմամբ մոռացել էին ալստեղ։

Բէլֆօրի ոմբակոծութիւնը շարունակում էր. Խղանակը զարհուելի էր. ձիւնի հետ սաստիկ ցրտեր էր անում. Կարծես Նախախնամութիւնն էլ դինուել էր մեր դէմ։

Խակ ես, ծօրժ, խոստովանուում եմ որ ալսքան դժբաղտութիւններից լիտոլ լուսահատուեցար. ամենաչնչին աղմուկը յուզում էր ինձ. ինձ շարունակ թւում էր, որ դարձեալ մի նոր անբաղտութիւն էր աւելացել մեղ. ժամանակ առ ժամա-

Նակ համբերութիւնից դուրս էի զալիս և պատրաստ էի ուղղակի դէպի մահը զնալ, թաղ ինձ սպանէին, միայն թէ վերջ դրուէր կեանքիս այս կամ ան կերպ. Զանձրովիս, վճառութիւնս վերին աստիճանի էին հասել, երբ վերջապէս նամակ ստացաւ աղջկանից:

Տատը մեռել էր.

Վարդ-Մարին պէտք է գար ինձ մօտ Սէնտ-Դիէ, Նախնդրում էր մի փոքրիկ տուն վարձել, ուզելով մի քանի բան փոխադրել կարասիքից, չորմրից, անկողնից և մնացած վաճառել Գրառուֆտալից մեկնելուց առաջ Գրում էր, որ ուղեգնացութիւնը կտեսէ երեք օր և շաբաթուակ վերջին կտեսնուինք:

Ակսակէս ուրեմն, խեղճ տատի տանջանքները սպառուեցան. նա հանդստանում էր իւր դստեր կատերինէի և իւր ամուսին Բրուտատի կողքին, որոնց ես անքան սիրում էի Ես մտածեցի, որ նոքա ամենքն էլ բաղտաւոր են ինձանից, երբ հանգստանում են իրանց հարազատների մէջ իրանց հալրենիքում:

Ինձ միսիթարեց՝ դստերս տեսնելու լոլսը. Ես արդէն երեակալում էի, որ միասին պիտի ապրէինք համեստ կերպով մինչև պատերազմի վերջանալը. խկ երբ ծանը լետ կդառնար և տեղ կստանար, դարձեալ մի բուն կշինէինք խաղաղ անտառում. ես պաշտօնս կթողնէի և չնալելով բոլոր կրածս դժբաղտութիւններին, օրերս կկնքէի հանդարտութեան և խաղաղութեան մէջ, թոռներով շրջապատօւած:

Ալս ամենը ինձ բոլորովին բնական էր թւում. Աստուածարդարադարադատ է, և շուտով ամեն ինչ նախկին դրութիւնը կառնէ. Վարդ-Մարին եկաւ 1871 թուի րոնտարի Յին.

Ամսական 12 Փրիանկով երկու սենեակ վարձեցի իւր խոհանոցով դրացի «Ուկէ խարիսխ» տան երկրորդ լարկում, պ. Միշէլ պարտիզպանից, որ մի պատուական մարդ էր և պապակում մեծ ծառալութիւններ արեց մենք:

Ցունուարի Յին սաստիկ ցուրտ էր. Վարդ-Մարին նշանակել էր թէ որ օրը պիտի գալ, բաւց չէր գրել առաւօտ թէ երեկոյ ես անհամբեր սպասում էի.

12 ժամին մօտ Շտարկի սալլակը երեաց փողոցի ծալ. րից, ամբողջովին բեռնաւորուած կարասիներով և անկողնով. Վարդ-Մարին նստած էր սալլակի վերալ, իւր հանդ. մօր մուշ-

տակում փաթթուած, բարձրահասակ ածխավաճառ Շտարկը սանձից քաշում էր ձիերը.

Նս ընդ առաջ վաղեցի, Համբուրելով Շտարկին, որ սար-
լը կանգնացրեց, համբուրեցի և դատերս և շնչացի.

— Ժանից լուր ունիմ... Նա անցել է Սէնտ-Դիէի վերա-
լով... Պ. Արանսը միջոց է տուել նորան պրուսական գիծն
անցնելու և Լուարի գնդի հետ միանալու.

Նա պատասխան չտուեց, բայց երբ հաղորդեցի նորան
ալս՝ ծանր ախ քաշեց և նորա ձեռները առանձին ոլժով փա-
րուեցան վզովս:

Շտարունակեցինք ճանապարհը. մի լիսուն քալից լետոյ
հասանք տուն: Շտարկը ձիերը ներս տարաւ սկսէց առիւծիո
ախուը, Վարդ-Մարին մտաւ հիւրատան ճաշարանը, և բարի
պառաւ Օրին, որ ընդառաջնել էր մեղ, ստիպեց նորան մի
թաս արգանակ խմել տաքանալու համար, որովհետև նա խիստ
ստոել էր: Աղյ իսկ օրը ես ու Շտարկը կարասին ներս տա-
րանք ու դասաւրեցինք: Երբ 4 ժամը խփեց, ամեն ինչ տեղն
էր: Վառարանը վառեցինք: Վարդ-Մարին ալնպէս էր լոգնել,
որ հարկ եղաւ օգնել նորան երկրորդ լարկը բարձրանալու:

Յանկարծ աշքովս ընկաւ, որ նա գունատ էր և աշքերը
վառուսէ էին—սա ինձ զարմացրեց. բայց ալս փոփոխութիւ-
նը ես վերագրեցի տատին հսկելու ժամանակ անցրած անքուն
գիշերներին, վշտին, լուզմունքին և ամենից աւելի երեք օրուակ
ճանապարհորդութեան բաց սալլակով արդախի խիստ ցրտին:
Աստուած իմ: Բնական չէ ալդ փոփոխութիւնը ալդքան նե-
գութիւններից լետոր: Ես գիտէի, որ նա առողջ է. երեխսակ
հասակից նա երբէք չէր հիւնդացել, ես ինձ հանգստացրի,
որ կառողջանալ. փոքրիկ խնամքից ու հանդստութիւնից լետ
նա դարձեալ ալնպէս թարմ կլինի, ինչպէս առաջ էր: Վա-
ռարանում կրակը թէժ վաւում էր. սենեակը մաքուր էր. մեր
հին պահարանը, պատից կախ էին պատկերները և պատի ժա-
մացուցի սլաքի չխչխկոցը—մեր անտառի տան բոլոր նախկին
սարքը լաւ տպաւրութիւն գործեցին Վարդ-Մարիի վերակ.
Նա գոհ մնաց և ասաց.

— Լաւ կապրենք ալստեղ, հալր. կապրենք հանգիստ և
գերմանացիք էլ հետու չեն քշի մեղ: Միան թէ ծանը շու-
տով զար, սպա ամեն ինչ լաւ կլինի:

Նա խօսում էր խռպոտ ձախով:

Նա ցանկացաւ խոհանոցը տեսնել և չնալելով, որ մութն էր ալն, ալսուամենալին հաւանեց:

Որովհետեւ ուտեսատի պաշար չունէինք, ևս ճաշ ապսպրեցի հրերանոցից և երկու շիշ էլ գինի: Շատարկը չուզեց դրամ վերցնել ինձանից: Նա ասաց, որ անտառում գործ չկալ, և նորա համար մինչև անդամ աւելի լաւ էր, որ ձիերը բերեց, քան թէ ախոռում պարապ թողնէր նոցա: բայց ճաշից չնրաժամկեց և լանձն առաւ մի հրկորորդ բաժակ գինի ևս խմել:

Ճաշի ժամանակ Վարդ-Մարին ինձ պատմեց խեղճ տատի մահուան մանրամասնութիւնները, թէ ինչպէս էր նա վախճանուել, երեք օր զառանցանքի մէջ աղաղակելով. Շրուատ, Ֆրեղերիկ... գերմանացիք... Ֆրեղերիկ, մի թողնէք ինձ, հետներդ տարէք... վերջապէս Աստուած խղճաց նորան և կանչեց իւր մօտ. Գրառփոտալի բնակիչների կէս մատը ուղեկցեց նորան, չնալելով որ ձիւն էր, մինչև Թօղէնհալմ, որպէս զիթաղեն իւր հարազատների կողքին: Վարդ-Մարին ալս տիսուրօրերի նկարագիրն անելով, չկարողացաւ արտասուքը զապել, և ժամանակ առ ժամանակ նորա խօսքը ընդհատում էր հաղից, ալնպէս որ ես խնդրեցի ալլ ես չպատմել արդ:

Մենք ճաշեցինք և չնորհակալութիւն արիՇտարկին իւրած ծառալութեան համար:

Ես նորան ասացի, որ դժբաղտութեան մէջ միալն մարդ ճանաչում է իւր խսկական բարեկամներին: Յ ժամին նա գնաց, չնալելով, որ ես համոզում էի գիշերել մեղ մօտ:

Ես ուղեկցեցի նորան մինչև փողոցի վերջը և խնդրեցի չնորհակալութիւնս հաղորդել ծեր Լկէլին և նորա դստեր ալնամենի համար, ինչ որ նոքա արին մեղ համար. և եթէ կպատահի Ֆէլարէրգի մօտ՝ լալտնել պառաւ. Մարգրէդէլին մերդութիւնը և թախանձագին խնդրել, որ հաղորդէ մեղ ինչ որ գիտէ իւր որդի ժան Մէրլէնի մասին: Խոստացաւ և մենք բաժանուեցանք, Ես առուն դարձալ, խիստ գոհ դստերս դալու վերալ, բայց փոքր ինչ լուզուած նորա մրսելու համար: Լուրջ երկիւզ նորա առողջութեան մասին ես չունէի, ինչպէս արդէն ասացի, ծօրմէ Երբ մարդուն տեսնում ես միշտ սուող, ալդ պիսի մրսելուն նշանակութիւն չես տալիս:

Դարձեալ երկու ամիս էր մնում մինչև ձմեռուալ վերջը. Մարտի սկզբից արեն արդէն պայծառ լուսաւորում է, սկսում է գարունը. ապրիլին մարդերն ու ալղիները արդէն սկսում

ևն կանաչել, մեր լուսամուտների տակ երկու մեծ արկդ կար գալարուն բոլսերով, որոնք բարձրանում էին մինչև լուսա- մուտները, և այս կանաչը թերևա փոքր ինչ լիշեցնում էր մեր լքած անտառի տնակը։

Ինձ ամեն ինչ լաւ գոլնով էր ներկալանում և Վարդ- Մարիին տեսնելով զզացուած՝ պատճառ էլ պահառ էր երե- ւում ինձ, Մինչև ժանի վերադաշը ևս մտածում էի ազրել միայն Վարդ-Մարիի համար, որքան կարելի է քիչ մտածել պատերազմի մասին, թէպէտ և այս շատ դժուար էր, երբ հա- րենիքը ալզպիսի ծանր դրութեան մէջ էր, ալն, շատ դժուար էր հանգիստ ապրել, ևս ինձ խօսք տուի մրայն հանելի նո- րութիւններ հաղորդել զստերս, — օրինակ լաղթութիւնները, եթէ մնոնք բաղդ կունենալինք ունենալ, — և զգնւշութեամբ ծածկել նորանից երկիւզա ժանի մասին, որի տեսական լուս- թիւնը տիսուր մտածումներ էր ազդում ինձ։ Ալսպէս մտածե- լով տուն եկալ, Մթնում էր Վարդ-Մարին սպասում էր ինձ վառ լամպարի առաջ նստած։ Նա գրկաբաց ընկաւ ինձ վերալ և շնչաց։ Ա՛ս, հալր, ինչքան բաղտաւոր եմ, որ դարձեալ միասին ենք։

—Ալ՛, ալն, զաւակս, —պատասխանեցի ես. — Նոքա էլ որոնք նեռու են մեզանից, նոլնպէս կվերադառնան, Դարձեալ պէտք է փոքր ինչ համբերել... Մենք այնքան շատ անար- դարութեան դիմացանք, որ բաւական պէտք է համարել. Ակժմ, դու մի փոքր անառողջ ես... ճանապարհորդութիւնը լոգնեց- րել է քեզ... բայց շուտով ամենը կանցնի. Գնա քնիր, զա- ւակս, հանգստացիր։

Նա գնաց իւր սենեակը և պարկելով՝ գոնութիւն տուի Աստծուն, որ աղջիկս ինձ դարձրեց.

ԼԵ.

Եւ այսպէս, ծօրժ, կորցրի տեղս էլ, բոլոր ունեցածն էլ, որ ձեռք էի բերել երեսնամեալ աշխատանքով, խնալողու- թեամբ և բարեխիղճ ծառալութեամբ. կորցրի հալրենիքս, հարազատներիս, բարեկամներիս, և մնաց ինձ մի միիթարու- թիւն. դուստրս, բարի, անդրդուելի Վարդ-Մարիս, որ տեսնե-

շով լուսահատութիւնս՝ ժպտում էր ինձ, չնալելով իւր վշտին
և տանջանքներին:

Նրբէք չեմ ների ինձ, որ չկարողացաք ծածկել նորանից
լուսահատութիւնս, ոչ էլ բարկանալս այն մարդոց վերաց, ո-
րոնք այս վիճակի հասցրին մեղ.

Ա՛խ, հեշտ է ժպտում նա, ում գործերը լաւ են գնում:
Բայց ով ստիպուած է լինում թափառել օտար երկրում, կա-
րութել ամեն բանի, —նա ծիծաղելու ոչինչ չունի:

Մենք խիստ տնտեսաբար էինք ապրում. Վարդ-Մարին
ջանասիրութեամբ աշխատում էր մեր փոքրիկ տնտեսութեամբ,
իսկ ես լաճախ ամբողջ ժամեր նստում էի լուսամուտի մօտ,
մտածելով վերջին պատահարների, իմ սարսափելի աքսորի
մասին հալրենիքից. Ալսպիսի բոպէններին արհամարհանքը տի-
րում էր ինձ լանկարծ, և վալրենի աղաղակով ձեռքերս բարձ-
րացնում էի դէպի երկինք:

Վարդ-Մարին թուի թէ ինձանից հանդարտ էր. ստո-
րանալը, դժբաղտութիւնը, թէ մեր անձնական, և թէ բոլոր
ֆրանսիակի, այս ամենը զուցէ ինձանից ոչ պակաս տանջում
էր նորան, բայց նա ծածկում էր ալս. Մի բան մրան չէր
կարողանում նա ծածկել —դա իւր հաղն էր, որ ինձ խիստ
անհանգիստ էր անում. Փոխանակ պակասելու, ինչպէս ես
լուս ունէի, օրէցօր աւելանում էր, մանաւանդ գիշերները,
երբ ամեն ինչ լուռ էր և լսում էր ալս չոր, սուր հազը,
ինձ թուում էր որ նորա կուրծքը պատառում է, և սարուափած
վեր էի թռչում անկողնիցս:

Ժամանակ առ ժամանակ ալս զարհուրելի հազը դադա-
րում էր. Վարդ-Մարին գիշերը քնում էր հանդիստ, և ես խ-
կոն սիրտ էի առնում, մտածելով ֆրանսիանի աւելող դըժ-
բաղտութիւնների, Պարիզի զարհուրելի սովի, սպանուածնե.
րով ծածկուած պատերազմական դաշտերի, վիրաւորներով լի
հիւանդանոցների, հրդեհների, հարկահանութեան, կողոպուտի
մասին. ես ասում էի, որ մենք դեռ գոհ պէտք է լինինք, որ
մի կտոր հաց ունինք և տաք վառարան...:

Բայց պատերազմի ժամանակ անհաւատալի բաններ են
լինում. Մենք չսղթեցինք ամբողջ նւրոպալին, Բայց ալս
չարգելեց մեղ ալժմ իւր հերթին լաղթուած լինել... միթէ
գերմանացիք չեն կարող նոյն վիճակի հասնել. Բոլոր թղթա-
խաղները վերջ ի վերջու լաղթուում են.

Ալս ամենը խռնում էր գլխում, Վարդ-Մարին և առում էր.

—Դեռ ամեն բան կորած չէ, հայր, ամենը կորած չէ... զիշերս երազ տեսալ... Տնակ ժան Մէրքէնին անտառապետի պաշտօնազգեստով. շուտով լաւ լուրեր կիմանանք՝

Աւազ. բարի լուրեր... Խեղճ երեխան... Ալոր ալժ... Իրաւոնք ունէր զեղեցիկ երազներ տեսնելու. կարող էիր երազել, որ ժանը, անտառապետի հագուստով, ժպտալով, ձեռքիցդ բռնած տանում է քեզ սպիտակ հագուստով սպիտակ պւակը զլիմիդ. մտնում էք Գրառուֆտալի փոքրիկ մատուռ, ուր ծեր քահանան սպասում էր ծեզ պսակելու... Ալս ամենը պէտք է իրականանար. բայց որ ալս լինէր, պէտք է երկրիս վերալ աւելի քիչ լինէր անպիտանների թիւը, որոնք խանգարում են սահմանուած կարգերը.

Ամեն անգամ, որ ես լիշում եմ ալս, Ժօրժ, ինձ թում է, որ մի ձեռք սիրու հանում է տեղից. Ուզում եմ պատմութիւնս ընդհատել, բայց որ խօսք եմ տուել քեզ — կպատմեմ մինչեւ վերջ.

Մի անգամ նստած էինք կրակի մօտ. Վարդ-Մարին, սաստիկ նիհարած, մտածմունքի մէջ, մանում էր, ես էլ բռլուվին խորասուսուեցալ մեր անտառի տան, կանաչող դարնան, հանդարտ մելամաղձական աշնան լիշողութիւնների մէջ. իմ առաջ պատկերացան թռչունների երզը, գետի շառաչը եղեգնուարի մէջ, լսում էի ծեր տատի ձախը, կալաս հովուի կանչը, Ռազօի ուրախ հաշոցը և մեր կովերի խուլ բառանցիւնը. ես ալս ամենի մասին մտածում էի ճախարակի ներդաշնակ ձարին և մեր հին ժամացուցի սլաքի չխչխկոցի հետ, երբ հեռուից կանչելու և երգի ձախն լսո եց

Վարդ-Մարին վախեցաւ. ես դողացի, քնից անակնկալ զարթեցրած մարդու պէս: Գերմանացիք ուրախանում էին. Նոր դժբաղութիւն էր հասել մեզ. Ալսպէս մտածեցի ես և չսխալուեցի:

Շուտով փողոցում երևացին զինուորներ, որոնք անցնում էին ձեռք ձեռքի տուած և բարձրաձալն աղաղակում.

—Պարիզն անձնատուր եղաւ, կեցցէ Գերմանիան:

Նաևեցի Վարդ-Մարիին. նա տժողին էր, ինչպէս մեռած և փալլող աչքերով նա էլ ինձ էր նախում. Մենք երեւներս

դարձրինք մէկմէկուց, որպէս զի մեր վշտերը ծածկենք, Նա-
գնաց խոհանոց, և ես լսում էի նորա հեծկլուանքը,

Վերջին հարուածը տուած էր, Ժօրժ, վերջին լուսերից
Էլ դրկուեցինք.

Մինչև կէս գիշեր աղմուկը չդաղարեց փողոցում. զլուխս
կախարած՝ լուսահատութեամբ. լսում էի թէ ինչպէս խոհանո-
ցի միջնորմի ետեր հազից խեղաւում էր Վարդ-Մարին.

Եօթ ժամի մօտերքը Վարդ-Մարին ներս մտաւ լամպա-
րը ձեռին, Նա ուզեց սեղան պատրաստել,

— Ինձ համար աման մի գնի, ասացի ես,— չեմ ուզում
ուտել,

— Ես ես,—պատասխանեց Նա:

— Ե՛ս, ուրեմն քնենք. աշխատենք մոռանալ մեր դժբաղ-
տութիւնները, աշխատենք քնել.

Ես վերկացալ. արտասուաթոր գրկեցինք իրար, Այս գի-
շերը զարհուրելի էր մեզ համար, Ժօրժ.

Վարդ-Մարին չնալելով որ ամեն ջանք զործ էր գնում,
որ հազը պահէ, շարունակ մինչև առաւտ հազում էր, անպէս.
որ աչքա չփակեցի. Ես վճռեցի թիշկ հրաւիրել, բայց, չուզե-
նալով աղջկաս վախեցնել, մտածեցի. մի կերպ նախասատ-
րաստել նորան. Հազիւ լուսաղէմին մի քիչ քնեցի.

8 ժամն էր արդէն, որ զարթեցի և կանգնելով՝ կանչե-
ցի Վարդ-Մարիին, Նա չպատասխանեց. Ստալ նորա սենեա-
կը և բարձի վերալ կարմիր բծեր նշմարեցի. թաշկինակը որ-
մոռացել էր գիշերուալ սեղանի վերալ նոյնպէս արիւնոտ էր.

Մարսափած քաշուեցալ իմ անկիւնը, կալծակնահար ե-
ղած ալ նոր վշտի վերալ.

ԼԶ

Մի անգամ, առուտուրի օրը, Վարդ-Մարին դուրս գնաց
պաշար առնելու. 10 ժամին մօտ իտ եկաւ ալնպէս, լօգնած,
որ հազիւ էր կաղովը ձեռքին բռնել.

Նալելով նորան՝ լիշեցի ան մատաղ աղջկանց դժգուն
դէմքերը, որոնց մասին խեղճ մարդիկ ասում են, թէ Աս-
տուած նոցա կանչում է իւր մօտ, և ալդպիսիները հանդարտ
քնում են առաջին ձեան հետ. Այս միտքը երկիւղ աղդեց

ինձ. բայց ակնուհետե եմ նորան ասացի, ըստ կարելովն հանդարտ:

— Լսիր, Վարդ-Մարի. գիշերս լսեցի քո հազի ճակնը. մտառանջւում եմ դորա վերալ:

— Ե՛ն, ոչինչ չկալ, համը, — պատասխանեց նա, մի քիչ կարմրելով. զարունը որ զալ հազս կանցնի:

— Ես չեմ կարող հանգիստ լինել, մինչև բժիշկը չպարզէ թէ զա ինչ բան է. Պէտք է անպատճառ բժիշկ կանչել:

Նա նալեց ինձ, ձեռները դարսելով կողովի վերալ, որ դրեց սեղանին. զուցէ իմ լուզմունքից դուշակելով, որ նորա արիւնոտ թաշկինակը տեսել եմ, շշնչաց.

— Ինչպէս կամիս, հալր, եթէ ալդ բանը կհանգստացնէքեղ...

— Ալո՞ հիւանդութեան առաջը ժամանակին պէտք է առնել, սկզբում աննշան հիւանդութիւնը եթէ անուշադիրթողնենք, ապագալում կարող է վտանգաւոր դառնալ:

Ասացի ու դուրս ելալ:

Ներքենք պ. Միշէլը խորհուրդ տուեց ինձ դիմուլ բշկ. կարիերին. Գնացի նորա մօտ:

Նա 60 տարեկան, չոր-չոր, սև կենդանի աչքերով և ճերմակ զլիով մարդ էր. նա ուշադրութեամբ լսեց ինձ և հարցրեց՝ նո եմ այն անտառապետը, որի մասին խօսել է իւր հետ իւր բարեկամ պ. Արանսը. Պատասխանեցի՝ ալո և իսկով եկաւ հետո:

20 բոպէից կետու մեր տանն էինք:

Վարդ-Մարիին կանչեցի. բժշկը երկար հարց ու փորձ արաւ նորան, թէ երբ է հազն սկսուել, ինչ է զգում ալժմ, գիշերը ջերմ կամ շնչարզելութիւն չէ ունենում:

Ակնպէս վարպետութեամբ էր հարցնում, որ նա ստիպուեց պատասխանել, և ծեր բժշկին շուտով լաջողեց իմանալ, որ Վարդ-Մարիին արիւնախառն հազում էր մի ամսից աւելի. խոստվանուեց, սաստիկ գունատուելով և ինձ նալելով, կարծես ներումն խնդրելով, որ ծածկել է ինձանից ալդ հիւանդութիւնը:

Այս նո ներեցի նորան բոլոր սրտից, բայց սորանով լուսահատութիւնս չպակասեց:

Պ. Կարիերը, լսելով նորան ասաց, թէ հիւանդութիւնը առանձին վլանդ չէ սպառնում, և գնաց դեղատումս գրելու.

Բալց հարնան սեննկում, երբ մենակ մնացինք, նա ինձ
հարցրեց՝ թէ մեր ընտանիքում ոչ ոք հիւանդ չէ եղել կը ք-
քացաւով. հաւատացրի, որ ոչ իմ, ոչ կնոջս կողմից ոչ ոք չէ
եղել առա նա ասաց.

—Հաւատում եմ, զուսարդ շատ առողջ կաղմուածք ու-
նի, դա շատ գեղեցիկ մարմնակազմ է,—բալց որևէ դէպք,
ընկնելը կամ ալգիսի մի բան հասցրել է ալս զրութեան.
Գուցէ նա ուղում է ծածկել մեղնից, բալց անհրաժեշտ է
իմանալ.

Նս նորից կանչեցի Վարդ-Մարիխն, և բժիշկը հարցրեց
նորան, թէ չէ վալր ընկել կամ սաստիկ վիրաւորուել մի քա-
նի շաբաթ առաջ. նա աւելացրեց, թէ հիւանդութեան պատ-
ճառն իմանալով՝ ըստ ալնմ զեղ կը գրէ և թէ սորանից գու-
ցէ կախուած կլինի նորա կեանքը.

Վարդ-Մարիխն խօստովանեցաւ, որ ալն օրը, երբ գերմա-
նացիք դուրս էին տանում մեր կովերը, ինքը ուղեցել է պա-
րանից բանել որ չթողնի, բալց պրուսացիներից մէկը խփել
է իր ուսին զէնքի կոթով. զորանից վալր է ընկել կուրծքի
վերալ և վեր է կացել բերանը արիւնով լիքը. բալց ալն ժա-
մանակ երկիւղից ինձ ոչինչ չէ ասել, որովհետև ես ալդ դա-
զանսւթիւնից զալրացած՝ ընդունակ էի ամեն բան անել.

Ամեն ինչ պարզ էր.

Արտասուրքս չկարողացակ զսպել, նալելով գժգոյն դստերս
—ալդ զարհուրելի դժբաղդութեան զոհի վերալ.

Նա դուրս գնաց.

Բժիշկը գեղը գրեց, և երբ մենք վալր իշանք՝ նա ինձ
ասաց.

—Շատ ծանր բան է... Միայն մի աղջիկ ունիք.

—Միմիս ին դա է,—պատասխանեցի:

Նա տիսուր էր և մտախոր:

—Ամեն բան արինք, ինչ որ կարելի է.—ասաց նա.—
Զահիւների մէջ ալսքան ոլժ. Սակայն աշխատեցէք խոլս տալ
ամեն տեսակ լուզմունքից:

Փողոցով անցնելիս՝ նա նոյն խօսքերն ու խորհուրդները
կրկնեց, ինչ որ բժ. Սէմպէրլէնը տուել էր ինձ տատի նկատ-
մամբ, ես ոչինչ չպատասխանեցի. ինձ թւում էր, որ զետինը
պատռում է իմ զլխին և միջից լսում.

—«Զոհեր... զոհեր... զեռ էլի զոհեր եմ ուղում...».

Կուղենայի առաջինը պարկել, աչքերս փակել և պատաս-
խանել.

«Ա՛ռ ինձ և կենդանի թող երիտասարդներին... թալլ
տուր նոցա դեռ շնչել, նոքա չը գիտեն, որ ապրելը՝ տան-
ջանք է նշանակում. երբ փորձեն՝ անկարեկից կմնանեն... քո
զոհերը կլինեն...»

Ալս տիսուր խոհերով մտալ դեղատուն, մեծ կամուրջի
մօտ. դեղը պատրաստուեց.

Տուն դարձալ.

Ամեն առաւօտ իրիկուն Վարդ-Մարին երկու գդալ դեղ
էր ընդունում, ինչպէս պատուիրել էր բժիշկը. Առաջին օրից
իսկ նկատեցի, որ սկսաւ առողջանալ. ձախնը պարզուեց, ձեռ-
ներն ալնպէս տաք չէին. նա ժպտում էր, կարծես ասելով.

—Տեսնում ես, հարիբկ, պարզապէս մրսել էի... մի վըր-
դովուիր:

Անսահման հեզութեամբ էր փալում նորա հալեացքը.
Նա երջանիկ էր, որ թարմանում էր, ժանին շուտով տեսնելու
լուսը աւելացնում էր նորա երջանկութիւնը. Ի հարկէ, ես պահ-
պանում էի նորա լուսերն ու ասում.

—Ալս օրիերս լուր կստանանք—ալս ինչ գրացին նոյնպէս
նամակ է սպասում որդուց—ալլ ևս արգելքի չի հանդիպի.
Պատերազմի ժամանակ փոստը արգելւում էր, նամակները
պարկում էին փոստի գրասենեակներում... Գերմանացիք ցան-
կանում էին մեղ վհատեցնել... Ալժմ, երբ դաշն է կնքուած,
բոլոր նամակները ճշտութեամբ տեղ կհասնեն:

Վարդ-Մարին լարուած ականջ էր դնում ինձ և դէմքը
փալում էր ուրախութիւնից.

Ես ալլ ևս թոլլ չէի տալիս նորան փողոց դուրս գալ-
ինքս վերցնում էի կողովը և գնում տռեստութի. բարի առետրա-
կանները ճանաչում էին ինձ:

—Հին անտառապետը գալիս է,—ասում էին նոքա,—
որի պատուական աղջիկը հիւանդ է: Ալժմ ինքն է փողոց
դուրս գալիս:

Եւ երբէք ոչ ոք նոցանից թանգ չէր ծախում ինձ:

Աս առ ևս հալրենիքի դրութեան մասին չէի մտածում,
—ուղում էի միայն դատերս կեանքը փրկել. Թօրդօի ազգա-
ցին ժողովի ընտրութիւններին միանդամայն անտարբեր գե-
րաբերուեցի:

«Միարն թէ Վարդ-Մարիս ողջ մնալ...»

Ազապէս անցաւ ժամանակը մինչեւ լունուարի վերջ, երբ
դաշը կնքուեց:

Օր չէր անցնում, որ դրացիներից մէկն ու մէկը լուր
չստանար որդկերանցից, եղբայրներից, հարևաններից, որոն-
ցից ոմանք գերի էին տարուել Գերմանիա, ուրիշները տեղա-
ւորուած էին Ֆրանսիայի խորքում իրանց տները, բոլց մենք
—ոչ մի խօսք:

Ամեն առաւօտ ես փոստ էի զնում իմանալու, նամակ
կալ թէ ոչ. Մի անգամ փոստի ծառալողն ինձ ասաց.

—Աս, դնւք էք. ցրուիչն իսկոյն դուրս զնաց... նամակ
բերեց ձեզ:

Հիացած ալս լուրից, տուն վազեցի. դրան շէմքում դի-
պակ ցրուիչին, որ ուրախ ուրախ ասաց ինձ.

—Շուտ գնացէք, Ֆրեղերիկ հալրիկ, վերջապէս նպատա-
կի հասաք, Լուարի գնդից նամակ ունիք.

Սանդիմով վեր վազեցի լուզմոնքից բարախող սբառով.
Մի բան կիմանանք, ի՞նչ է պատահել. ԶԲ գալիս արդեօք,
Գուցէ վազը կզակ... զուցէ երեք, չորս օրից:

Խիստ լուզմունքից չկարողացալ դրան բանալին գտնել.
բայց վերջապէս դուռը ուժով բաց արի — սենեակում մարդ
չկար:

Ձայն տուի. —Վարդ-Մարի, Վարդ-Մարի:

Պատախան չկար:

Ներս մտալ միւս սենեակը —աղջիկս, գետնի վերալ փը-
ռուած, պառկած էր ինչպէս մեղրամոմ. նորա մեծ աչքերը
կիսաբաց էին, նամակը ձեռքում սղմած և շրթունքներից ա-
րիւն կաթելիս:

Կարծեցի թէ մեռել է, և հեկեկալով՝ զգուշութեսմբ ան-
կողնի վերալ դրի նորան:

Ապա, սարսափից գլուխս կորցրած՝ սկսալ դուալ, կան-
չել և նամակը վերցնելով, մի վալրկենում կարդացի:

Ահա. կարդա, ժօրժ, բարձր ձալնով կարդա. ևս անգիր զիտեմ, բայց միւնոն է, ինձ հաճելի է վէրքը զրգուել իմ սրտում. երբ արիւն է դալիս՝ ցաւը հանգստանում է:

«Թանկադին Վարդ-Մարի

«Մնաս բարեւաւ... էլ երբէք չեմ տեսնի քեզ... ուումբի կտորը աջ ուսւ ջարդեց... վիրաբոլժները անդամահատեցին. չեմ կարող տանել. խիստ շատ արիւն եմ կորցրել... Ամեն բաւ վերջացաւ... մեռնելու եմ... Օ՛հ, Վարդ-Մարի, իմ թանկադին, ինչքան կուդէի քեզ տեսնել գէթ մի ըսպէ, մի վալրկեան. բնչպէս կթեթեացնէր ալդ իմ տանջանքները. ինչքան ժամանակ որ վիրաւոր պարկած եմ եղել ձիւնի մէջ, շարունակ մտածում էի քո մասին... Մի մոռանար ինձ... լիշիր երբեմն ժան Մէրլէնին... Խեղճ Մարդդէդէլ մալրս. խեղճ Ֆրեդերիկ. խեղճ Դանիէլ քեսի. Յալտանիր նոցա իմ վիճակը... Ախ, բնչպէս ամենքս երջանիկ կլինէինք, իթէ ակս պատերազմը չլինէրու:

Այստեղ ընդհատւում էր նամակը: Ներքեւ, ինչպէս տեսնում ես, ուրիշ ձեռափով է աւելացրած.

«Ժան Մէրլէն, Էլզասցի»

«21 գնդի զօրաբաժին, 26 լունուար 1870»:

Ես միանգամից կարդացի և նորից սկսալ աղաղակել կանչել, վերջապէս՝ Ցուլանալով ընկալ բազկաթոռի մէջ, խոստովանելով, որ ամեն ինչ կորցրել էի, դուստրս, փեսաս, հարենիքս... ամենը... Մնում էր որ ես էլ մեռնեմ:

Իմ ձալնի վերալ վաղեց եկաւ Սիշէլը կնոջ հետ, Բժիշկ կանչեցին: Ես ցնորուածի պէս էի, մտածելու անընդունակ. ականջս խշշում էր, և ինձ թւում էր, որ քնած զարհուրելի երազ եմ տեսնում:

Բժ. Կարիերի ձալնի վերալ մի փոքր ուշքի եկալ:

—Դուրս տարէք դորան, —ասաց բժիշկը. —որ չտեսնի ալս, շուտով դուրս տարէք:

Ինձ վերցրին. արհամարհանքը տիրեց ինձ և գոչեցի.

—Չեմ ուզում, որ ինձ դուրս տանեն... ուզում եմ ալստեղ մնալ... Սա իմ դուստրն է... Դուք որդիք չունիք, որ հրամալում էք ինձ դուրս տանել: Ուզում եմ փրկել աղջկաս: Ուզում եմ պաշտպանել նորան:

—Թողէք, —տիրութեամբ ասաց բժիշկը, —Թողէք խեղճ

դժբաղախն. Բալց լոեցէք,—դարձաւ նա ինձ,—ձեր աղաղակը՝
կարող է փոթացնել սորտ վախճանը,

Ես ընկալ բազկաթոռի վերալ, շշնչալով.

—Զեմ աղաղակի, ձալն ծպտուն չեմ հանի. Միալն թո-
ղէք ինձ դորա մօտ, պ. բժիշկ. հանգիստ կլինեմ.

Քանի մի բոպէ անց բժիշկը դուրս գնաց, ներկալ եղող-
ներին նշան անելով, որ դուրս գնան:

Հատերը հետևեցին նորան, մի քանիսը միայն մնացին.՝
Ես տեսալ թէ ինչպէս անց ու դարձ էին անում նոքա, ուղ-
ղում էին անկողինը, բարձը վեր էին քաշում, հանդարտ խօ-
սելով միմեանց հետ Խորին լուսթիւն տիրեց... ներս մտաւ
քահանան դպրի հնտ .. սկսան լատիներէն լեզուով աղօթել...

Պառաւները աղօթում էին ծնկաչոք:

Ամեն ինչ վերջացաւ,

Հինդ ժամի մօտ էր Մթնում էր, Լամպարը վառեցին.՝
Ես կամաց վեր կացալ և մօտեցալ մահճակալին.

Դուստրս, հրեշտակի պէս սիրուն, կիսարաց աչքերով.՝
տակաւին շնչում էր. հանդարտ հեկեկալով՝ կանչեցի.

Վարդ-Մարի... Վարդ-Մարի..

Ամեն վալրկեան ինձ թուում էր, թէ կնալէ ինձ ու կպա-
տասխանէ.

—Հալրիկ.

Բալց միայն լամպարի լուսն էր առկալծում նորա դէմ-
քին, Նա պառկած էր անշարժ: Եւ ամեն վալրկեան ես լսում-
էի, թէ ինչպէս նորա շնչառութիւնը թուլանում էր, և տես-
նում էի ինչպէս ալտերն ու ճակատը ծածկում էին մահո.ան
դալկութեամբ: Վերջապէս, ծանր հառաչելով, նա մի փոքր
զլուխը վեր քաշեց, նորա գունատ կապուտ աչքերը բա-
ցուեցան.

Կողքիս կանգնած մի կին սեղանից վերցրեց փոքրիկ
հալելին և մօտեցրեց նորա շրթունքներին. սա բոլորովին չը
խաւարեց: Վարդ-Մարին մեռաւ.

Զալն չհանեցի, ոչ մի տրտունջ չյալտնեցի, և թոլլ տուի,
որ ինչպէս մի երեխալի տանեն ինձ միւս սենեակ: Նստալ-
մի անկին, ձեռքերս կախած ծնկներիս վերալ, ես բոլորովին
նուաղել էի: Վերջացրի, Ժօրժ—ամեն բան պատմեցի քեզ.

Հարկաւո՞ր է ալլ ևս խօսել մոմերի, դագաղի, գերեզմա-
նատան մասին:

Թաղելուց լեռու հետ դարձալ իմ փոքրիկ՝ բնակարանը ուր կենում էինք Վարդ-Մարիի հետ, և զգացի՝ իմ կատարեալ միայնութիւնս. չունէի ոչ արենակիցներ, ոչ հալրենիք, ոչ լուս և մոտածում էի.

«Միշտ մենակ կըինես... միշտ... մինչև մեռնելդ...».

Ոչ... էլ չեմ կարող շարունակել. շատ ծանր է. և պատմեցի ինչ որ կարողացար:

Ցնորուածի պէս էի. վրէժխնդրութեան ցանկութիւն ծագեց իմ մէջ.

Իմ մէջ չէր, ծօրժ, ալս զգացումը, ալ այն թշուառ էակի, որ լքուած էր երկնքից ու երկրից, որից մաս առ մաս դուրս էին հանել նորս սիրաը և որ չգիտէր, որտեղ գլուխը լինէ:

Ես աննպատակ թափառում էի փողոցներում. բարի մարդիկ խղճում էին ինձ. պառաւ Օրին կերակրում էր ինձ: Այս ամենը ես լեռու իմացար. Ան ժամանակ ես ոչինչ չէի հասկանում. տիրուր մաքերը չէին թողնում ինձ. խօսում էի ինքս ինձ, պանդոկի վառարտնի մօտ նստած, ճերմակ գլուխս ձեռքերով բռնած և գետնին նալելով:

Աստծուն լալանի է, թէ ինչքան ուժգին էր ալն ատելութիւնը, որ եռում էր իմ մէջ ալդ միջոցին:

Պառաւ Օրին լսում էր բոլոր խօսածը և այս բարի կինը իմ մասին տեղեկութիւն տուեց պ. Արանսին:

Մի առաւօտ, երբ ես մենակ նստած էի պանդոկի դահիճում, եկաւ պ. Արանսը և սկսաւ խասել, որ միշտ ինքը այն կարծիքի է եղել, որ ես ազնիւ, աշխատասէր և բարեխիղճ մարդ եմ եղել, որի վերալ կարելի է բոլորովին վստահել, և լուս լալանել որ ալդպէս էլ կմասմ մինչև վերջ. որ լաւ և հաստատուն բնաւորութիւն ունեցող մարդը մինչեւ անդամ ամենազարհուրելի դժբաղտութիւնների մէջ չպէտք է ինքն իրան դաւաճանի. որ պարտքն ու պատիւը պէտք է ամեն բանից բարձր լինին. ամենալաւ մխիթարութիւնը կեանքում ալն է, որ մարդ կարող լինի ասել իրան. «շատ տանջուեցար, ճշմարիտ է, բայց արիութիւնը ձեռքից չթողիք և մաքուր խիղճը օգնական է ինձ. թշնամիներս անգամ պէտք է խօսապվանուեն, որ բաղադր անարդար կերպով հալտծում է ինձու:

Նա երկար խօսեց ալս ոճով, անց ու դարձ անելով սե-

նեակում. և ահա ես, որ չկարողացաւ լոց լինել աղջկաս թաղ-
մանը, արտասուքով լցուեցի.

Ապա նա ասաց, որ ես պէտք է ալդտեղից գնամ, որ պրու-
սացիներին տեսնելը ցնցել էր ինձ, որ նա ինձ լանձնարարական-
նամակ կտալ իւր պարիզեան բարեկամներից մէկի վրայ, և
կստանամ գոնչ մի փոքր տեղ երկաթուղու վերայ, կամ որ և
է ուրիշ մի տեղ. երբ ինձ պաշտօնից կազատեն, կապրեմ խա-
ղաղ, հեռու ալն ամենից, ինչ որ շարունակ լիշնցնում է ինձ
դժբաղատութիւններս.

Ես պատրաստ էի կատարել ամենը, ինչ որ նա ցանկա-
նում էր, ժօրժ. նա իմ լաւն էր ուզում միալն.

Գնացի Պարիզ. և ահա երեք տարի է, ինչ որ ծառալում.
եմ արևելեան երկաթուղում.

ԼՅ.

Իմ գալս եղաւ պաշարումից լեռ զարնուրելի խառնա-
կութեան ժամանակ. ես վկալ եղաւ նորանոր սարսափների,
որոնց լիշողութիւնը առաւել ևս հզօրացնում են իմ տանջանք-
ները. Փրանսիացիք կաւում էին Փրանսիացիների դէմ... Ամ-
բողջ քաղաքը բոցի մէջ էր և պրուսսացիները վալրենի ու-
րախութեամբ հրճւում էին ալս տեսարանով:

—Պարիզն էլ չկալ, —ասում էին նոքա: Պարիզը գոյու-
թիւն չունի:

Ալո՞, ես վկալ էի ալս բանին, Ես մտածում էի, որ ամեն
ըսան վերջացած է և սարսափած ասում էի.

—Ալսպէս ուրեմն, Նախախնամութեանը հաճելի էր ֆրան-
սիան կործանել.

Սակալն դեռ ալս չէր բոլորը. Ալս թշուառութեանց իբ-
րև հետեանք էլզասցիք ու լոտարինգացիք պէտք է գաղթէին,
Որովհետեւ ես ծառալում էի արևելեան երկաթուղում, տեսալ
թէ ինչպէս տասնետակ հազար մարդիկ, կանալք, երեխաներ,
ծերեր ուղևորում էին հաց վաստակելու հալրենիքից հեռու-
Ալժիրիա, Ամերիկա—ով ուր կհանդիպէր.

Խեղճ իմ երկրացիք ինձ ճանաչելով ասում էին.

—Սա մերն է:

Նոցա տեսնելով՝ կարծես փոքր ինչ թեթեանում էի, —
կարծես թէ փլում էր ինձ վերայ հալրենի շունչը: Մենք սղմում

Էինք միմեանց ձեռքերը! Ես չոցա ցոլց էի տալիս հիւրանոց-ները, զանազան մանր ծառալութիւններ էի անում, ինչ որ անում ենք պատահական բարեկամներին, որոնք բարի կամեն իրանց օգնողների մասին:

Իսկ երեկոին, վերնալարկի սենեակս լետ դալով և մտածելով հալրենակիցներիս մասին, պատահում էր որ բաղաւառոր էի, զգաւով որ բոլորովին էլ անօգուտ չէի երկրիս վերտա. պաէ այժմեան միակ մխիթարութիւնս, ծօրժ. երբեմն դորա շնորհիւ հանդարտ քնում եմ.

Երբեմն, անձրեալին, ցուրտ եղանակին, կամ երբ պատահմամբ տեսնում եմ նորատի օրիորդի սպիտակ դազաղ սպիտակ պսակով զարդարած, տիսուր մտքերը նորից տիրում են ինձ... ծառալութիւնից դառնալով ձգում եմ վրաս հին վերարկուս և առանց նպատակի վազում եմ փողոցներով մարդկանց մէջ, որոնք զբաղուած են իրանց գործով և ոչ ոքի վերակ ուշք չեն դարձնում. Ես գնում եմ հեռու՝ մէկ Յաղթական դռների մօտ, մէկ Բուսաբանական պարտէզի, և լետ եմ զալիս չափազանց լոգնած, Փուն մտնելով՝ աշխատում եմ չմտածել անցած պայծառ օրերի մասին, որովհետև ալս լիշողութիւնները, քնի մէջ անգամ, ուժգին բարախում են սիրտս, և զարթնում եմ ամբողջապէս քրտնած և գոչելով:

—Ամեն ինչ վերջացած է. —դուստրդ մեռաւ. մնացիր մենակ աշխարհում.

Ապա վեր եմ կենում անկողնից, վառում եմ լապտերը, և լուսամուտը բանում եմ, որ հանգստանամ և ուշքի դամ:

Երբեմն երազի մէջ տեսնում եմ, որ բնակում եմ անտարի տանս ժանի ու Վարդ-Մարիի հետ. Ցեսնում եմ նոցա... խօսում նոցա հետ... ամենքս երջանիկ... Զարթնելով... բաւական է ստկալն խօսել ալն մասին, ինչ որ անցած է և լետ չէ գալս...

Երբ ես մեռնեմ, ինձ ոչ ժանի մօտ կթաղեն, ոչ դատերս մօտ. Ամենքս ցրուած կլինինք. Այս բանը շատ ծանր է ինձ համար:

Պարիզիք մեզ, էլզասցիներիս եղբօր պէս ընդունեցին, նոքա մեզ օգնեցին ինչով կարողացան. Բալց նոքա իրանք ալնպէս խիստ տուժեցին, որ կարօտութիւնը ամենուրեք զգալի էր. Վիլէտ, Շապէլ և ուրիշ արուարձաններսւմ դեռ երկար ժամանակ տիրում էր առվն ու ցուրտը.

Ներկալում զաղթականների առաջին հոսանքն անցաւ, դրեթէ ամեն մէկը գործ ունի. կանալք և ծերեր—պատսպարուած են. մանուկներն ուսանում են զպրոցներում,

Բայց զաղթականութիւնը՝ այսուամենախիւ չէ զաղարում և չի ընդհատուի, մինչև որ Ֆրանսիան լիտ չդարձնէ Ելզասն ու Լոտարինգիան. իսկ եթէ մնզանում Կուսակցութիւնների թշնամութիւնը կշարունակուի և մենք չենք միանալ լանուն հալրենիքի աիրոլ, երկար ժամանակ լիտ չենք ստանալ ալդ նահանդները.

ԼՇ.

Այս տիսուր պատմութիւնից լետոյ ես կպատմեմ քեզ, Ժօրժ, որ Աստծուց չեմ զանգատաւմ, Աստուած արդարադատէ, և մենք լիովին արժանի էինք այս պատժին. Ո՞վ է մեր թշուառութեանց մէջ մեղաւորը. Մարդս, որ երդուել է Աստծու առաջ սահմանած օրէնքներով վարուել և ոտնակոխ արեց նոցա. որ սպանեց նոցա, ովքեր պաշտպանում էին ալդ օրէնքները. և կղզիները աքսորեց հազարաւոր մերձաւորներին, որոնք կարող էին լրանց խելքով. և անդրդուելի բնաւորութեամբ վտանգաւոր լինել. Եւ այս մարդուն ինքներս ընտրեցինք, մենք քուէ ենք տուել ոչ մէկ, ալլ քսան անդամ, ուստի մենք էլ պարտաւոր ենք պատասխան տալ նորա լանցանքների համար, մենք մոռացանք արդարութիւնն ու պատիւը. մենք ալսպէս էինք մտածում, «ամենից առաջ օդուտ. ալս մարդուն լաջողում է, պէտք է պաշտպանենք...»:

Երբ ես լոկ միան լիշում եմ, որ քուէ եմ տուել ալդ մարդու համար, զիտենալով, որ անարդար եմ վարում, բայց վախենում եմ որ տնդիցս կզրկուիմ, երբ լիշում եմ այս, ասում եմ ինքս ինձ. «Ֆրեդերիկ, թող Աստուած ներէ քեզ! Ամենը կորցրիր—բարեկամներին, հարազատներին, հալրենիքը, ամեն ինչ... խոստովանիր, որ արժանի էիր այս ամենին. Դու չամաշեցիր այն մարդու կողմը բանել, որ հարիւր հազար Փրանսիացիներին նոյնքան թշուառութեանց ենթարկեց, ինչքան և քեզ. Դու քուէ տուիր ոլժին արդարութեան դէմ—խոնարհիր նորա առաջ, ինչ որ խոստովանեցար. 'Ինչպէս' բիւր ուրիշներ, դու իրաւոնք տուիր ալդ մարդուն, որ պատերազմ քալտնէ, և նա լալտնեց... նա ծաղրում էր քեզ, չընտանիքդ

և քո բոլոր հալրենակիցներդ, իւր արքալական ցեղի շահերի պատճառով, չմտածելով ուրիշ ոչնչի մասին, ընդունելով ոչինչ նախազգուշութիւն, Նա լազմուեց... Համբերիր և լաիր. Մի արտնջմ Նախախնամութեան վերալ քո սեպհական կիմարութեան և անարդարութեան համար.

Ահա թէ ինչ էի ես մտածում.

Թող ուրիշները օգուտ քաղեն իմ օրինակից. թաղ, ընտրելով իրանց ներկալացուցիչներին, գուէն տան աղնիւ մարդկանց. աղնուութիւն, անշահասիրութիւն, հալրենասիրութիւնը —ամենից վեր են. շափաղանց ճարտար մարդիկ լաճախ անազիւ են գուրս գալիս, իսկ շափաղանց լանդուգները, որոնք օրէնքի դէմ աղաղակելու չեն վախենում, ընդունակ են խանդարել այն և կամալականութեամբ փոխարինելու. Ակս է իմ ամենալաւ խորհուրդը Փրանսիացիներին. Եթէ նոքա կօգտուեն —ամեն ինչ լաւ կանցնի, մենք լեռ կդարձնենք կորցրածը. Եթէ չէ, այն ժամանակ էլլասի ու Լոտարինգի վիճակին կենթարկուին բոլոր նահանգները —մէկը միւսի ետևից. Կղղանք, բայց ուշ կլինի:

Բայց գերմանացիք էլ կհնձեն ալս, ինչ որ ցանեցին. Ալժմ նոքա երջանկութեան և փառքի բարձրութեան վերալ են. նոքա դողացնում են ամբողջ Եւրոպան և ուրախանում են դորա վերալ. Մենք փորձով գիտենք, թէ դա ինչ վնասակար է, —նոքա էլ իրանց կարգին կհասկանան ալս բանը:

Բիսմարկին լաջողեցին իր ձեռնարկութիւնները, և գերմանացիք պաշտում են նորան. Նոքա չեն կամենում հասկանալ, որ ալդ մարդը իր նպատակներին հասնելու համար գործ էր զնում նաև ալսպիսի միջոցներ, ինչպիսի են խորամանկութիւն, խարէութիւն, լրտեսութիւն և բռնութիւն... Ակսպիսի հիմքի վերալ կառուցած շինութիւնը չէ կարող լինել և չէ լինում ամուր:

Բայց ինչ որ չես ասի. գերմանացիներին, — միենախն է անօգուտ կլինի: Նոքա արբած են իրանց լազմութիւններով և ինելքի չեն գալ մինչև որ Եւրոպան, զրդուած. նոցա լանդանութիւնից և պատուասիրութիւնից, չի: Վեր կենակ նոցա դէմ և չի ստիպի նոցա ուշքի գալ: Այն ժամանակ և միայն ալս ժամանակ նոքա կհասկանան, ինչպէս մենք էլ ստիպուած եղանք հասկանալ, որ եթէ ուներբեմն որքը գերակշռում է արդարութեան, այնուամենալիւ ալդ երկար չէ անում, որովհետև արդարութեան թագաւորութիւնը անստահան է: